AZG
armenian newspaper

Յունուար 11. 1992
Շաբաթ
Եռօրեայ թերթ,
Բ տարի, թիւ 2 (94)
գինը 30 կ.

դասիչ՝ 69149
հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243266 SULA SU

# Կանադան դեսպանատուն կբացի մայրաքաղաք Երեւանում

*Կանադայի արտգործնախարարության մամլո կենտրոնից հաղորդում են.*- Արտաքին հարաբերությունների գծով պետքարտուղար Բարբարա ՄԿԴուգալն այսօր՝ հունվարի 8-ին հայտարարեց, թե Կանադան պատրաստվում է ամենամոտ ժամանակում դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Հայտարարությունը կատարվեց Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի այստեղ կատարած աշխատանքային կարճ այցից հետո:

*«Հայաստանը կարող է հույս դնել Կանադայի նեցուկին՝ որպես գործակից եւ բարեկամ,*- ասաց տիկին ՄԿԴուգալը: - *Ես հույս ունեմ խորացնել մեր կապերն այս նորանկախ երկրի հետ»:* Նա հայտնեց, որ իր երկիրը դեսպանություն կհաստատի մայրաքաղաք Երեւանում:

Իր այցի ընթացքում պրն. Հովհաննիսյանը տեսակցություն ունեցավ Կանադայի արտաքին հարաբերությունների եւ միջազգային առեւտրի գծով բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Նրանք քննարկեցին զենքերի կրճատման, զինաթափման եւ միջազգային այլ պայմանագրերին միանալու հայկական պետության ծրագրերի հետ՝ կապված հարցեր, բանակցեցին մարդու իրավունքների գծով միջազգային տարբեր համաձայնագրերին հարելու հարցի շուրջ: ■

# Գամսախուրդիա-Սիգուա. փոխադարձ մեղադրանքներ

Ինչպես արդեն հաղորդել էինք, Զվիադ Գամսախուրդիան 134 զինակիցների, ընտանիքի անդամների եւ բարեկամների հետ շարունակում է մնալ Իջեւանի շրջանի հյուրանոցներից մեկում, որ հունվարի 8-ին, նրա հետ հանդիպել են Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը եւ Գերագույն խորհրդի նախագահության անդամ Խորով Հարությունյանը: Ինչպես մեր թղթակցին հաղորդեց Բ. Արարքցյանը, հանդիպումը կրել է աշխատանքային բնույթ եւ առայժմ, նրա արդյունքների մասին որեւէ տեղեկություն հաղորդելը վաղ է:

Իսկ մինչ այդ հունվարի 7-ին եւ 8-ին Սոխումիում տեղի են ունեցել «պաշտոնական» նախագահ Զ. Գամսախուրդիայի կողմնակիցների հանրահավաքներ, որոնց մոտ 2000 մասնակիցները պահանջել են վերականգնել Վրաստանի օրինական իշխանությունը, շրջափակել են Սամտրեդիի կայանի երկաթուղու տարածքը եւ Զուգդիդի քաղաքի ավտոճանապարհային երթեւեկությունը: Հայտնի է, որ փակված են Ռուսաստանը Վրաստանին կապող գրեթե բոլոր մեծ ավտոմայրուղիները, կանգնեցվել են 12 մարդատար եւ 14 բեռնատար գնացքներ, որոնք չեն գալիս նաեւ Հայաստան: Այդ առիթով Սոչի քաղաքի ղեկավարությունը հատուկ ավիաուղերթներ է կազմակերպել Երեւան: Երեկ, երկաթուղային շրջափակումը վերացվել է:

Գուրձիդիի շրջանում Գամսախուրդիայի կողմնակիցները հարձակվել են ՊԱԿ-ի շենքի վրա եւ քննչական խուցից ազատ արձակել բռնվածներին:

Իսկ Թբիլիսիում, տասը կուսակցությունների եւ շարժումների ղեկավարներ հանդես են եկել իշխանությունը հանրապետության ժամանակավոր կառավարությունը հանձնելու դիմումով: Կառավարության ղեկավար է առաջարկվել Թենգիզ Սիգուան, որը հավաստիացնում է, թե նոր միջոցներ կձեռնարկվեն Հարավային Օսիայի եւ Աբխազիայի կոնֆլիկտների լուծման ճանապարհին եւ կապահովվեն ազգերի եւ մարդու իրավունքները:

Հայկական հեռուստատեսությանը տված հարցազրույցում Զ. Գամսախուրդիան նշել է, որ ինչ-որ խոովարարների պահանջով ինքը չի հրաժարվի նախագահությունից եւ հույս է հայտնել, թե Հայաստանի իշխանությունները չեն աջակցի, այսպես կոչված, հանցագործներին: Վերջիններիս նկատմամբ ունեցած մեղմ գործելակերպը Գամսխուրդիան համարել է իր իշխանության հիմնական սխալներից մեկը:

Դրությունը Վրաստանում շարունակում է մնալ լարված: Ըստ Վրաստանի պետական անվտանգության նախարար Մայսուրաձեի հայտարարության, կռիվների ընթացքում բռնկված հրդեհի պատճառով վառվել են Վրաստանի ՊԱԿ-ի արխիվները: Իսկ անկախ դեմոկրատների միության առաջնորդներից մեկը՝ Խաինդրավան, երեկ հայտարարել է, թե նոր կառավարության նշանակած ընտրությունների օրերը վաղաժամ են եւ կայունացման ուղղությամբ լուրջ քայլեր չեն ձեռնարկվում:

Ստեղծված իրավիճակում կարեւորվում է նաեւ Հայաստանի դիրքորոշումը: Այդ կապակցությամբ Հայաստանի Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը մեր թղթակցին հաղորդեց, թե «բանակցությունները երկու հանրապետությունների միջեւ շարունակվում են եւ ամեն ինչ կախված կողմերի նրանից, թե վրացական նոր ուժերը ինչպանով կհամախմբվեն, իսկ մենք պետք է հաշվի առնենք հետեւյալ հանգամանքները, մեր պետական շահերը, մարդկային բարոյական չափանիշները եւ մեր ազգակիցների վիճակը Վրաստանում: Հիմա այդ հարցով զբաղվում է Հայաստանի անվտանգության խորհուրդը, որի հստակ դիրքորոշումը մինչեւ օրս հայտնի չէ: Լավ կլինի նաեւ, որ Հայաստանի Գերագույն խորհրդի պատվիրակությունը մասնակցի Թբիլիսիում գումարվելիք Վրաստանի Գերագույն խորհրդի նիստին եւ պարզաբանի մեր հանրապետության դիրքորոշումը: Դրան զուգահեռ պետք է ճիշտ աշխատեն նաեւ զանգվածային լրատվության միջոցները եւ ժամանակին տեղ հատկացնեն մեր կարծիքը: Եւ ինչ էլ լինի, ավելացրեց Դ. Վարդանյանը, պետք է հիշենք, որ Գամսախուրդիային Վրաստանում տարբեր հաշվածներ այլ կերպ են ընդունում, իսկ նոր կառավարությունը թեեւ ունի մեծ ուժեր, սակայն դեռեւս անհայտ է բնակչության շրջանում նրա ունեցած ժողովրդականությունը»:

Լուսանկարը ՍՊՏԵՆԳՈՍ

# Սեւծովյան նավատորմը կլինի Ռուսաստանյան




Ցույց Սեւծովյան նավատորմի: Լուսանկարը ՍՊՏԵՆԳՈՍ

Ամենահրազեկ ռազմական փորձագետների կարծիքով, իրավիճակը, կապված Սեւ ծովի նավատորմի խնդրի հետ, սկսում է զարգանալ հօգուտ Ռուսաստանի: *«Մենք երբեք եւ ոչ մի հանգամանքների դեպքում թույլ չենք տա, որ Ռազմածովային նավատորմն անցնի ԱՊՀ-ի որեւէ հանրապետության ենթակայության տակ»*, հայտարարեց Ռուսլան Խասբուլատովը: Նա համաձայնելով, որ Ուկրաինային անհրաժեշտ է ծովափնյա պահպանության եւ մարտական ծառայության նավերից բաղկացած նավատորմ, նշեց սակայն, որ նրա կազմ չեն կարող եւ չպիտի մտնեն ավիակիրներ, հրթռնավեր եւ սուզանավեր: Իսկ Սանկտ-Պետերբուրգի փոխքաղաքագլուխ դեռեւս ավագ Վյաչեսլավ Շչերբակովի կարծիքով, Սեւ ծովի նավատորմի *«ուկրաինացումը»* ընդունելի չէ՝ հաշվի առնելով ոչ միայն միջազգային իրավական նորմերը, այլ նաեւ ռուսական ռազմական նավատորմի պատմական ավանդույթները:

Մինչդեռ, Կիեւում տեղի ունեցավ զինված ուժերի կառուցման հարցերին նվիրված համաուկրաինական խորհրդակցություն: Հանդիպման մասնակիցները կոչ արեցին Ուկրաինայում տեղակայված բոլոր ստորաբաժանումների զինծառայողներին՝ Ուկրաինայի ժողովրդին հավատարմության կամավոր երդում տալ եւ ստեղծված իրավիճակում կարգուկանոնը պահպանել:

Խորհրդակցությանը մասնակցեց նաեւ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը: Նա հայտարարեց, թե *«միացյալ բանակի գոյությունը հնարավոր չէ առանց միացյալ պետության»: «Մենք ստեղծում ենք մեր զինված ուժերը Ալմա-Աթայում եւ Մինսկում ձեռք բերված համաձայնագրերի հիման վրա»:* Խոսելով Սեւ ծովի նավատորմի ճակատագրի մասին, Լ. Կրավչուկը նշեց, որ *«դա բարդ հարց է, բայց մենք իմներս պետք է լուծենք այն: Մենք ոչ ոքի թույլ չենք տա դա անել: Ուկրաինան պետք է լինի ծովային պետություն»:*

Իսկ Ուկրաինայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Ժիվիլյաեւ իրավիճակի սրման հիմնական պատճառն անվանեց նավատորմի հրամանատար, ծովակալ Իգոր Կասատոնովի եւ Մոսկվայում ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի գործողությունները: Նա հայտարարեց, որ Ուկրաինան ծովային պետություն է եւ ունի Սեւ ծովի նավատորմի իրավունքը: Ուկրաինայի սպաների միության նախագահ գնդապետ Վիլեն Մարտիրոսյանը նշեց, որ հակադրության նպատակն է թույլ չտալ Ուկրաինային ստեղծել սեփական զինված ուժեր: Նրա խոսքերով, կրքերի բորբոքման գործում մեծ ակտիվություն են ցուցաբերում մարշալ Եվգենի Շապոշնիկովը եւ կենտրոնական հեռատեսությունը:

Մինչդեռ, Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը Ուլյանովսկ այցի ժամանակ հայտարարեց, թե *«Սեւ ծովի նավատորմը եղել է, կա եւ կլինի ռուսական»:* Նա հաղորդեց, որ խնդրել էր ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատար ծովակալ Վլադիմիր Չերնավինին Սեւ ծովի նավատորմի նավերի հրամանատարներին հայտնել, որ նրանք մնում են Ռուսաստանի նախագահի պատշտպանության տակ, եւ որ նավատինները երդում չտան Ուկրաինային: Դրա հետ մեկտեղ Ելցինը նշեց, որ Ռուսաստանը ձգտում է նորմալ հարաբերություններ կառուցել Ուկրաինայի հետ: Նա հիշեցրեց, որ այժմ Ուկրաինայում բնակվում են 11 միլիոն ռուսներ:

*«Ուստի մեզ չի կարելի կռվել Ուկրաինայի հետ»,*- նշեց Ռուսաստանի նախագահը:

Սեւ ծովի նավատորմը ենթակայեցնելու Ուկրաինայի մտադրությունը սուր ընդդիմության արժանացավ նաեւ նավատորմի հրամանատար ծովակալ Իգոր Կասատոնովի կողմից: Երեկ Սեւաստոպոլում տեղի ունեցած մամլո ասուլիսում նա հայտարարեց, որ Սեւ ծովը մասնատելու Ուկրաինայի ղեկավարության ձգտումը անհեթեթ է եւ մեղադրեց Ուկրաինայի պաշտպանության աշխատակիցներին անիրազեկության մեջ: Կասատոնովը համոզված է, որ Սեւ ծովի նավատորմը Ուկրաինային պետք չէ, քանի որ հանրապետությունը ի վիճակի չի լինի այն պահել: Շատ սպաներ կհրաժարվեն երդում տալ Ուկրաինային եւ հրամանատարի կարծիքով, նավատորմի նավերը *«պարզապես ածուղով կվաճառվեն»:*

Այդ ամենի արդյունքը կհանդիսանա շրջանի ուժերի հավասարակշռության էական խախտումը հօգուտ ԱՄՆ-ի 6-րդ նավատորմի, հայտարարեց ծովակալը: Նա հնարավոր է գտնում ստեղծել միացյալ նավատորմ Ռուսաստանի եւ Ուկրաինայի հովանավորության տակ, որին կմասնակցի նաեւ Վրաստանը:

Նրա խոսքերով, նավատորմում շատ լավ էին ընդունել Բ. Ելցինի հայտարարությունը, մասնավորապես ռուսաստանյան նավատորմի ստեղծման հնարավորությունը: ■

## Բուշի առողջական վիճակը մտահոգում է ընտրողներին

Նախանցյալ օրը Տոկիոյում կայացած պաշտոնական ընթրիքի ժամանակ սամոսի ցավի հետեւանքով ունեցած անկումից հետո ամերիկյան հասարակական կարծիքն անհանգստացած է 67 տարեկան նախագահի առողջությամբ: Այժմ ուշադրությունը կենտրոնացած է փոխնախագահ Քուեյլի վրա, որն այս օրերին ընտրաբաշխ է մղում նախագահական առաջիկա ընտրությունների կապակցությամբ:

Այսուհանդերձ, նախագահ Բուշն իր անկումից անմիջապես հետո փոխադրվելով իր ժամանակավոր ռեզիդենցիան, դեղեր էր ընդունել եւ քնել, ընթրիքի վայրից մեկնելուց առաջ հայտարարելով, որ լավ է զգում իրեն: Հաջորդ օրը նա առույգորեն շարունակել էր իր ծրագրի գործադրությունը՝ ճապոնացի պատասխանատուների հետ գլխավորաբար բանակցելով առեւտրական հարցերի շուրջ: ■

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

**Ռուսաստանի նախագահը հունվարի 30-ին մասնակցելու է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստին,** որի ընթացքում նախագահ Բուշի հետ բանակցելու է նախկին խորհրդային հանրապետություններին օգնելու ծրագրերի շուրջ, հայտարարեց Նյու Յորքում Ռուսաստանի դեսպանը:

**Հեռավոր Արեւելքի երկրներ 12 օր տեւած պաշտոնական այցից հետո նախագահ** Բուշը երեկ վերադարձավ Մ. Նահանգներ: Վաշինգտոնի օդանավակայանում տված հակիրճ ասուլիսի ընթացքում նա հայտարարեց, թե Խաղաղ օվկիանոսի շրջանում ներկայումս անվտանգությունը ավելի լավ հիմքերի վրա է դրված:

**Լիբանանյան ոստիկանությունը հայտնեց, թե իսրայելյան ռազմօդանավերը** երեկ ռմբակոծել են ծովեզրյա Դամուր քաղաքը, որի հետեւանքով զոհվել են 10 հոգի:

**Երեկ կեսօրին Լոնդոնի կենտրոնում, վարչապետի պաշտոնատնից ոչ շատ հե**ռու, ռումբ պայթեց: Զոհեր չկան, սակայն շրջակայքի շենքերը լուրջ վնասներ են կրել: Ռմբահարության պատասխանատվությանն ստանձնեց Իռլանդիայի ազատագրության բանակը:

**Լիբիան ՄԱԿ-ի ընդհանուր ժողով պահանջեց քննարկելու համար միջազգա**յին ահաբեկչությանը վերջ տալու հարցը: Այս կողմից, Մ. Նահանգները հայտարարեց, թե նախկին ԽՍՀՄ-ի միջուկային զենքի մասնագետ գիտաշխատողները կարող են բարձր աշխատավարձով հրավիրված լինել Լիբիա, ինչպես նաեւ երրորդ աշխարհի այլ երկրներ: ■

digitised by A.R.A.R.@

# ՄԵԱՔ ԲԱՐՈՂՎ ՍԵՂԱՆԻԿՆԵՐ

Եւ այսպես. Երեւանի քաղաքային իշխանությունների որոշմամբ փողոցային վաճառասեղանները երեք ամսով անհետացան (հանրապետության մյուս բնակավայրերում դրանց թախտն առայժմ անորոշ է): Լավ է գոնե (չնայած ուշացումով) դաւոնապես հեռուստատեսությամբ հայտարարվեց Երքաղխորհրդի կամքը, թե չէ հազար ու մի լուրեր էին տարածվել տարեմուտին դեռ ողջ-առողջ, աչխույժ առեւտուր անող այդ սեղանների մասին (ոմանք արդեն թաղող ափսեներին էին մեղադրում):

Վստահորեն կարող եմ ասել՝ սեղանիկների անսպասելի չքացումը երեւանցիների մեծ մասի մեջ գոհունակություն առաջացրեց, սակայն փոքր մասի մեջ՝ տարակուսանք: Մի փոքր իսկ խորհելիս կարելի է նաեւ հասկանալ, որ գոհունակությունն առավելապես զգացմունքային-հուզական է, տարակուսանքը՝ խելամիտ-քանական:

Իսկապես, գոհունակություն (հիմնականում չարախնդությամբ ուղեկցված) արտահայտում է այն մեծամասնությունը, որի համար սեղանիկային գներն անմատչելի էին, ուստի սեղանիկների չքացումը գնահատում է եթե ոչ իբրեւ աստծու արդար դատաստան, առնվազն որպես քաղաքային իշխանությունների իմաստացման առհավատչյա, «ուժեղ ձեռքի» գալստյան հավատիք: Տարակուսող փոքրամասնությունը բնավ էլ բաղկացած չէ լոկ սեղանիկների տերերից կամ նրանց հաճախորդներից, տարակուսողների մեջ էլ քիչ չեն «սեղանիկային կենսամակարդակից» նվազ վատակողները (այդ թվում՝ տողերիս հեղինակը): Ահա, ուրեմն, երեւանցիների փոքրամասնությունը տարակուսում է՝ մեզ հարցրե՞լ էին սեղանիկներով քաղաքը հեղեղելիս, հիմա էլ հարցնո՞ւմ են դրանցից մեզ զրկելիս: Հազիվ ընտելացել էինք, սկսել էինք յուրացնել նոր հոգեբանության այն այբուբենը, թե *«փող ունես՝ գնիր, փող չունես՝ լռիր»*, մի հոգեբանություն, որ վաղուց միշ ու արյուն է դարձած քաղաքակիրթ երկրներում, իսկ մեզ, մեր հին սովորույթի համաձայն, դեռ տրամադրում է բողոքի բուռն ցույցերի ու արդարություն սահմանելու աղերսալից կոչերի:

Եկեք, սիրելի ընթերցող, մի պահ վերանանք մեր համաքաղաքացիների մեծ մասի հաղթական գոհունակությունից եւ փոքր մասի տագնապահար տարակուսանքից: Եկեք ընթափ մոտենանք երեւույթին: Մանավանդ որ նրանք՝ սեղանիկները (քաղաքային իշխանությունների բացատրությամբ՝ դրանք արդեն լինելու են «սայլակիկներ», ճարտարապետական միջավայրին իբր ավելի ներդաշնակ եւ գնորդների նրբացած ճաշակին ավելի վայել) հարություն են առնելու: Եկեք, ուրեմն, ժամանակ չկորցնենք եւ այս հարկադրական դադարն օգտագործենք դրանց ծագումնաբանությունը իմաստավորելու վրա:

Այո, այո, հարա հիշեցեք սեղանիկների սկզբնադրեալ երկչոտ մուտքը, արդա՝ հետագա բուռն ծաղկումը: Որոշ տարիներ Երեւանն անգամ «սեղանաշեն» կոչեցին (չնայած ձրդոանը, պոլիէթիլենային բաղանիքներով դատած ու զանազան պաճուճանքով հանդերձավորված դրանք արդեն քաղաքին «տնակաշենի» տեսք էին հաղորդել): Էհ, թեկուզ ողջ երկիրն անվանենք «սեղանատան», հումորը խաբուսիկ է, բնավ չի բացատրում:

Անտարակույս, փողոցային վաճառասեղանները մեզանում զավեշտի եւ նաեւ սղանիչ ֆենդաստության արժանացան: Ով որ հանդգնում էր պաշտոնական խոսք ասել՝ անհապաղ կասկածանքի տակ էր առնվում իբրեւ սեղանատեր: Իհարկե, ինչ որ ասվել է (եւ բազմիցս ծամծմվել) վաճառասեղանների գոյության դեմ, հիմք ունի, դրանք եւ քաղաքի տեսքն են գցում, եւ աղբանոցի տեսակաբար մեծ մասը ոչ թե դրսից բերովի է, այլ ներսից ծառովի՝ մեր սեփական արտադրության կամ տեղական բազաներից, եւ պատանիներ են աշխատում եւ այլն:

Ի՞նչ կարելի է ասել: Քննադատողները ճիշտ են նկատում՝ երեւույթի մանրամասները, սակայն չեն կարողանում դրան ամբողջական իմաստավորում տալ: Այնինչ, մյուս կողմը, այսինքն՝ հիշյալ քննադատությունը չընդունողները, սահմանափակվում են թեպետ ամբողջական, սակայն վերացական պատասխան-արդարացումով, թե, այո, երանելի սեղանավաճառները մեր ադագա հայկական բիզնեսի սաղմերն են:

Իրոք, այդպես է: Այո, սա բիզնես է, այո, մեր՝ հայկական առանձնահատկություններով հանդերձ: Իսկ ինչպիսի՞ն պիտի լինեին այդ առանձնահատկությունները, միայն դրակա՞ն, միայն կատարյա՞լ: Եթե գիտակցում ենք այն պարզագույն ճշմարտությունը, որ ամեն ինչի սկիզբը դժվար է, ադա մի՞թե դյուրին պիտի լիներ այս կիսամեռ տնտեսության աչխուժացումը, տարիներով խեղված ու խեղդված ձեռներեցության կենդանացումը: Սեղանիկնե՞րն էլ պիտի առանց թերությունների եւ անգամ արատների ծագեին: Եւ ինչպե՞ս է պետք վարվել այդ թերությունների ու արատների հետ: Արգելելը, խրատ կարդալը, ամոթանք տալը ճի՞շտ են արդյոք, օգտակա՞ր են:

Ոչ մի դեպքում: Արգելելն էլ է սխալ, ամոթանք տալն էլ: Վարչական մեթոդները անհարիր են ազատ ձեռներեցությանը, տնտեսության ազատականացման ներկայիս գործընթացին: Բարոյախոսությունն էլ, իր հերթին, դույզնինչ ազդեցություն չի կարող գործել տնտեսական երեւույթների վրա:

Այո, փողոցային վաճառասեղանների ծագումը եւ գործառնությունը ուղեկցվեցին նաեւ անցանկալի երեւույթներով, ինչպես որ, ի դեպ, գրեթե ցանկացած նոր բան մեր կյանքում, չէ՞ որ նույնը կարելի է ասել սեփականաշնորհման, բազմակուսակցականության, մամուլի ազատության մասին եւ այլն: Այլ կերպ պարզապես չի կարող լինել: Եւ խընդիրն այն է, որ անցանկալի երեւույթները հրաժարվոր չէ վերացնել ոչ կոպիտ վարչարարությամբ, ոչ մերկապարանոց բարոյախոսությամբ, առաջին դեպքում դրանք հողարկվելու են, երկրորդ դեպքում ավելի նախահարձակ են դառնալու: Այնինքն, եւ արգելելու, եւ այպանելու մեթոդները ավելի շուտ կվնասեն, քան օգուտ կտան գործին:

Որեւէ երեւույթ նախ պետք է ըմբռնել, նախքան դրա կարգավորման փորձեր ձեռնարկելը: Առաջին քայլը պետք է ճիշտ կատարել՝ մնացած քայլերն ապագայում հեշտանան համար:

Ահա, ուրեմն, ինչո՞ւ սեղանիկներ (կամ սայլակներ), ինչո՞ւ այսպես. օգտագործենք բնիադատների բնութագրումը, ակնհայտ չարչիություն: Հետաքրքիր է, իսկ ինչո՞ւ ոչ, ի՞նչ էինք սպասում: Այո, սեղանիկային չարչիություն (չեմ կարծում, որ այդ բառը միայն բացասական իմաստ ունի), որովհետեւ հենց այսպիսին ենք մենք, այս վիճակին ենք հասել եւ դրանից՝ այդ իրական վիճակից (այլ ոչ թե մտացածին տեսություններից) ենք սկսում մեր վերընթաց զարգացումը դեպի քաղաքակիրթ կյանք:

Սեղանիկները երկնից չեն իջել՝ դրանք այլմոլորակայիններ չեն տեղադրել, մեր գործարար մարդիկ, ձեռներեցները, վաստակել ձգտողներն են դրանց արարիչները՝ ակամայից դրսեւորելով 90-ական թվականների ընկրկի հայաստանաբնակ հայ մարդու ճաշակը, առեւտուր անելու կարողությունները, կուլտուրան, գործելու բախը եւ այլն: Եթե կուզեք իմանալ, սեղանիկները մի յուրատեսակ հայելի են, որի մեջ մենք տեսնում ենք մեր սեփական դեմքը:

Կդառնա՞ն արդյոք փողոցային վաճառասեղանները մեր ադագա բիզնեսի իրական հիմքը՝ արդեն լուրջ հարց է: Նախ, որպես փողոցային կամ երջիկ առեւտրի կազմակերպման եղանակ, սեղանիկ-սայլակները, անկասկած, մնալու են, քանի որ մեր մեջ բնականոն ձեւով գոյանալու եւ գոյատեւելու է մանր առեւտրականների՝ չարչիների խավը: Բացի այդ, չի կարելի զարգացումը ուղղագծորեն պատկերացնել, սոսկ քանակական աճի տեսքով՝ ճնճղուկը թեկուզ տրամվելու չափ ուշ՝ բազե չի կարող դառնալ: Բայց ներկա չարչիների հաջող սերունդը (ոչ թե տարիքային, այլ գործունեության որակի առումով) հաստատապես կարող է դառնալ խոշոր գործատեր: Ընդ որում, հիշենք, որ բոլոր նորմալ երկրներն էլ անցել են «սեղանիկային փուլը», մանր առեւտրականը, վաճառառուն, արհեստավորը, ատիճանավորը նախ պիտի կարիտալ կուտակեին մեծ գործի անցնելու նպատակով:

Խնդիրն այն է, որ մենք նույն ճանապարհն անցնենք՝ հաշվի առնելով այլոց փորձը, առավելագույնս խուսափելով հիվանդագին սրխալների կրկնությունից: Իսկ սա նշանակում է տնտեսական գործունեության ձերբազատում վարչարարությունից, կամայականությունից, մանրախույզ վերահսկողությունից, անհետեւողական կազմակերպվածությունից եւ այս ամենի փոխարեն՝ տնտեսական գործունեության իրավական երաշխիքների կայուն աղահովում: Ավելորդ չէ հիշեցնելը, որ տնտեսության ազատականացումը ընդհանուր ոչինչ չունի ամենաթողության, անտերության, քաոսի հետ: Սա ճշմարիտ է մանավանդ մեզ համար: Այսօր բարգավաճող երկրները հնարավոր է, որ ժամանակ են ունեցել իրենց թույլ տալու տնտեսության իսկապես բարձիթողի վիճակ՝ ադավինելով շուկայի վերջնական կարգավորիչ դերին: Իմքնին հասկանալի է, որ միեւնույն ուղին մեզ համար տառադագին կլինի: Այստեղից՝ երիցս կարեւորվում է պետության կարգավորիչ, պլանավորող դերը, որքան էլ «պլանավորում» ասվածը վարկաբեկվել է սոցիալիզմի օրոք: Այս դերը սոսկ արտաքուս է թվում շուկայի կարգավորիչ դերին հակասող, իրականում կա ներքին ներդաշնակություն, եթե, անշուշտ, ճիշտ ենք մեկնաբանում պետության անելիքը, այսինքն՝ հասկանում ենք հիմնական պայմանը, այն է՝ մի բան է հեռանկարային եւ ընթացիկ պլանավորումը, բոլորովին այլ (եւ կատարելապես մերժելի) բան՝ արգելելը, պահանջելը, մեկեն վերացնելը եւ այլն:

Սեղանիկները մեր հոգեբանության, կարողությունների, ձեռներեցության, մեր վարքաբարքի արտահայտությունն են, այսօրվա արտահայտությունը: Դրանց դեմ պայքարելը նույնն է, թե զայրանալ հայելիում սեփական դեմքի արտահայտության վրա: Այո, վերջին պարագայում ոչ միայն հոգեբանը, այլեւ ցանկացած ողջամիտ մարդ խորհուրդ կտա փոխել դեմքի արտահայտությունը, փորձել ժպտալ, այլ ոչ թե հայելին կոտրել (կամ երեք ամսով թաքցնել):

Իհարկե, թե հոգեբանը, թե այդ ողջամիտ մարդը լավ հասկանում են, որ տառապող մարդը դժվար թե կարողանա կատարել իրենց խորհուրդը, եւ որ նման վիճակում նրանից կորզած ժպիտը ծամածռություն է հիշեցնելու, ընդհանուր ադահնում է հարկավոր: Ուրեմն, սեղանիկները կվերանան (իսկ մնացած սեղանիկներն այլեւս մեզ չեն զայրացնի), երբ մեր տնտեսական կյանքը մտնի նորմալ հուն, այդ ժամանակ այսօրվա քնադատները կդարձեն, որ սեղանիկները նաեւ առավելություն ունեն որոշ սպասարկման ձեւ:

Այսպիսով, խնդիրն այն չէ, որ արգելենք սեղանիկները (անգամ եթե դրա համար այսօր հիմք ենք տեսնում), ոչ էլ փառաբանենք դրանք, այլ ադահովենք բնականոն պայմաններ թե տնտեսության աչխուժացման, ձեռներեցության ծավալման, հայկական բիզնեսի զորացման համար, եւ թե կարողանանք դրանք ի նպաստ դնել ազգի [illegible]ական, հոգեւոր վերելքին: Սա լուծելի խնդիր է, եթե մենք խուսափենք անհարկի վարչարարությունից, սոցիալական ջղաձգումներից, եթե ձեւավորենք մեր զարգացման ազգային ռազմավարությունը՝ հաշվի առնելով բոլոր առկա պայմանները՝ տնտեսական, քաղաքական, կազմակերպական, հոգեբանական եւ այլն:

Վալերի ՄԻՐԶՈՅԱՆ

## Տեր-Պետրոսյան. Ադրբեջանը դեռ պատրաստ չէ փոխզիջումների

Ադրբեջանի մի շարք շրջաններում նախագահական կառավարում մտցնելու մասին որոշումը այդ հանրապետության ներքին գործն է, եւ Հայաստանի իշխանությունները միջամտելու ոչ մի ցանկություն չունեն, հայտարարեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը «ԻՖ»-ի թղթակցին տված հարցազրույցում:

Սակայն նախագահը նշեց, որ այդ որոշումը վկայակոչում է, որ «Ադրբեջանը, ցավոք, դեռ պատրաստ չէ փոխադարձ փոխզիջումների»: «Մենք չենք կարող անտարբերությամբ դիտել հայ բնակչության տարական իրավունքների կոպիտ ոտնահարման անվերջ փաստերը»,- նշեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Խոսելով Հայաստանում ստեղծված տնտեսական իրավիճակի մասին, նախագահը նշեց, որ մեկ տարվա ընթացքում հնարավոր կլինի կայունացնել հանրապետության շուկան: Նրա կարծիքով, դա հնարավոր է պատրաստի արտադրանքի կայուն արտադրության շնորհիվ: Դրա հետ մեկտեղ, Լեւոն Տեր-Պետրոսյանը նշեց, որ գազամուղի եւ երկաթգծի երկարատեւ շրջափակման հետեւանքով Հայաստանի արդյունաբերությունը, ըստ էության անգործության է մատնված: ■

## Դարձյալ նույն կարուսելը

Այսօրվա գների աննախադեպ բարձրացումը աչխատավոր զանգվածին եւ մտավորականությանը կանգնեցրեց փակուղու առջեւ: Ինչպես շարունակել գոյությունը ներկայիս աչխատավարձով, երբ նույնիսկ ոչ մեծ մեկ ընտանիքի համար օրական պետք է գնվի առնվազն 10 ռուբլու հաց: Նման իրավիճակում ինչպիսին էլ լինի բարձրացված գների դիմաց տրվող փոխհատուցումը, միեւնույն է, ժողովրդի զգալի մասը պիտի գնա դեպի աղքատություն:

Սա ախիոմա է, եւ սրա մասին խոսելն արդեն ավելորդ է անօգուտ:

Այսօր գնորդին դարձյալ զայրացնում է հացատեսակների նոր, բայց հին գնագոյացման ձեւը, որը նախորդ 70 տարիների կրկնօրինակն է: Դարձյալ գները նշանակվել են այնպես, որ վաճառողը հնարավորություն ունենա մեր կոպեկները գրպանելու: Կոմունիստական հասարակարգի օրոք դա արվում էր մտածված վաճառողին տալով ցածր աչխատավարձ, նրան մղում էին դրամաշորթության, այսինքն գնորդին սպիտում էին իր գրպանից լրացնել պետության կողմից նշանակված աչխատավարձի բացը: Այսօր, երբ աջ ու ձախ խարազանվում է հին համակարգը՝ ի՞նչ է արվում դրանից ձերբազատվելու եւ նոր, ավելի ընդունելի համակարգ ստեղծելու համար:

Երեկ Սպանդարյան շրջանի թիվ 44 հացի խանութում ականատես եղա մի քառասակ հերթի: Վաճառվում էր երկու տեսակի հաց «բաշոն» եւ «բուխանկա», ի դեպ, թխված շատ անորակ, էլ չեմ խոսում քաշի մասին: Ճիշտ է, գընաքիչներ կային, սակայն գրված էին այնքան անգույն բանաձով եւ այնքան հեռու, որ ոչ բոլորն էին կարողանում անզեն աչքով ջոկել թվերը: Սարդիկ հերթից ամեն մի բուրս եկողի հարցնում էին. «Ի՞նչ արժե հացը»: Բոլորը պատասխանում էին միանշանակ՝ բաշոնը 1ռ. 50 կ., բուխանկան 2ռ. 20կ.: Երբ հերթս կես ժամ անց մոտեցավ, վաճառասեղանին մի կերպ կարդացի նոր գները՝ բաշոն՝ 1ռ. 46կ., բուխանկան՝ 2ռ. 16կ.:

Դարձյալ նույն կարուսելը, դարձյալ գնագոյացման արտավոր նույն ձեւը:

Օրերս Վանո Սիրադեղյանը լրագրողներիս մեղադրեց, որ «հովանավորում ենք խանութի վարիչներին, որոնք գող են»: Ընդունենք, որ նա իրավացի է, նախորդ համակարգը նրանց սիրել էր դառնալ գող: Իսկ հիմա ի՞նչ է արվում նրանց ազնիվ վաստակով աղրել սիրելու: Օրական միայն թիվ 44-այդ փոքրիկ խանութը քանի՞ հաց է վաճառում եւ քանի 4 կոպեկներ է գրպանում: Ո՞վ է մեղավորը... Իհարկե, գներ նշանակողները:

Դիմեցի էկոնոմիկայի պետական կոմիտեի գների պետական կարգավորման բաժնի վարիչ Բելա Խաչատրյանին, որի հետ դեռ անցած մայիս ամսին բախվել էինք այս հարցով:

*«Մեր այսօրվա գները հաստատված են կառավարության կողմից, իսկ կառավարությունը հաստատել է՝ ելնելով բազմաթիվ գործոններից,-* ասաց տիկին Խաչատրյանը: - *Մենք օրերս կներկայացնենք մեր առաջարկությունները, որի ժամանակ կհաստատվեն հացի, մանկական սննդի, աղի, կաթի ու մածնի գները: Ասեմ, որ հացի գնագոյացումը առաջանում է երեք գործակցի հիման վրա՝ ներկայիս գործող գների համար»:*

Իհարկե, մեր ընթերցողի համար գների պետական կարգավորման բաժնի վարիչի բացատրությունը հասկանալի չէ: Ստացվում է, որ կառավարության կողմից գները նշանակելուց հետո նոր պետք է անդրադառնան դրանց եւ շրջումներ անե՞ն: Ինչ խոսք, գնագոյացման նման հաղթեղությունը երեւի օբյեկտիվ պատճառներ ունի: Չխորանանք: Միայն թե բնակիչն այսօր պահանջում է կլորացված գներ, թող բուխանկան 2ռ. 16-ի փոխարեն լինի 2ռ. եւ նրա 16 կոպեկը գնա մատնաբեր վրա եւ դա դառնա 3 ռուբ.: Այսպես նաեւ մյուս տեսակների գները: Միայն թե մենք սպիտված չլինենք, երեսներս պնդած, մեր կոպեկները պահանջել:

Տիկին Խաչատրյանն ասում է, թե մի բան կանեն հացի գները կլորացնելու համար:

Հուսանք, որ նա այս անգամ իր խոսքը կըհարգի եւ մեզ երկար սպասեցնել չի տա:

Լ. Դշխոյան

## Ստեղծվեց ՀՌԱԿ Էջմիածնի «Խրիմյան Հայրիկ» ակումբը

Դեկտեմբերի 26-ին Էջմիածնում տեղի ունեցավ ՀՌԱԿ «Խրիմյան Հայրիկ» ակումբի հիմնադիր ժողովը, որին մասնակցում էին քաղաքի մտավորականության, աչխատավորության եւ երիտասարդության ներկայացուցիչներ:

Ժողովը բացեց ՀՌԱԿ հանրապետական վարչության փոխնախագահ Կարեն Կոստանդյանը, որից հետո ելույթ ունեցան նախաձեռնող խմբից Նորիկ Լեւոնյանը, Մելիք Ալեքսանյանն ու Հրաչիկ Աբգարյանը: Երդման արարողությանը մասնակցեցին նախապես կուսակցությանն անդամագրվելու դիմում կատարած մի քանի տասնյակ նորագիրներ: Այնուհետեւ կայացավ ակումբի անդրանիկ վարչության ընտրությունը: Ակումբի ատենապետ ընտրվեց Նորիկ Լեւոնյանը, փոխատենապետներ՝ Մելիք Ալեքսանյանը եւ Հրաչիկ Աբգարյանը, ատենադպիր՝ Խորեն Դիլանյանը, գանձապահ՝ Մելքոն Գեւորգյանը: ■

digitised by A.R.A.R.@

# «Մեր նպատակը ազգային գանձերը բաշխելն է»

**Գեւորգ ՔԵՇԻՇՅԱՆԸ Ամերիկայի եւ Կանադայի Թեմերյան մշակութային միության կենտրոնական վարչության ատենապետն է: Նա ծնվել է Թուրքիայում, Ալեքսանդրեթի Բեյլան քաղաքում: 1940-ին գաղթել է Հալեպ: Բեյրութի Ֆրանսիական համալսարանում ստացել բժշկական կրթություն: 1968-ին գաղթել է ԱՄՆ: Շարունակել է սովորել, զբաղվել բժշկությամբ: Դեռեւս 14 տարեկանում Հալեպում հիմնադրել է Բարեգործականի ուսանողաց միությունը, որն այսօր սիրիահայ գաղութի ամենամեծ կազմակերպությունն է: Լիբանանում ուսանելու տարիներին Բարեգործականի Հայ երիտասարդաց ընկերակցության Միջին Արեւելքի կենտրոնական վարչության անդամ է եղել: Այժմ Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության անդամ է: 1980-ին ընդունվել է ՌԱԿ-ի շարքերը: Զբաղվել է լրագրությամբ: Հրատարակել է 4 գրքեր՝ «Սեռային ներդաշնակությունը ամուսնության մեջ», «Արբունքը եւ սեռային հարցերը», «Մեր եւ ընտանիք», «Մանկաբուժությունը կամ ինչպես մեծացնել երեխան»:**

«Պայքար» թերթի խմբագիր Գրիգոր Քյոսեյանի հետ Բոստոնից գնում ենք Մանչեսթր, ուր այժմ ապրում է Գեւորգ Քեշիշյանը. նրա հետ միասին դիտելու Ֆրանսիայում Գառզուի Մանոսքի բանգարանի բացումը պատկերող տեսաժապավենը: Մտնում ենք Մանչեսթր. ավելի ճիշտ՝ ճանապարհը խվում է քաղաքին. որ հետու է թվում: Ճանապարհի աջ ու ձախ կողմերում. իրարից հետու. ծառերի մեջ սպիտակ վենասներ են: Թեքվում ենք դեպի դրանցից մեկը: Տունը գեղեցիկ է. ցածրիկ: Բակում. կից շինության տանիքի տակ ճոճաթոռին թիկնած մի մարդ է: Գեւորգ Քեշիշյանն է՝ միջին տարիքի. միջահասակ. կանոնավոր. խնամված դիմագծերով: Նա տեղից վեր է թռչում եւ անձրեւի տակ գրկաբաց գալիս դեպի մեզ. «օր. ինչո՞ւ այսքան ուշացաք» ասելով: Շտապով հրավիրում է ներս. որպեսզի չթրջվենք:

Ներսում. ամերիկյան առանձնատան մեջ. ամեն ինչ անսովոր է: Անցնում ենք նախամուտքով. մի սենյակի. մյուսի միջով. դուրս գալիս մի երկար. պարտեզին. նայող սենյակ: Հոտանցիկ նայում եմ ամեն ինչին: Բնակարանի իրերը հնաոճ են. կրում են խնամքի եւ անհատականության հետքեր: Պատերին նկարներ են. լուսանկարներ: Մեկը կարծես հոչակավոր Մաղոնեան է. գեղեցկատես. երկար. անփույթ մազերով մի տղայի հետ: Գեւորգ Քեշիշյանն անցյալ տարի կինոաշխարհում մեծ աղմուկ հանած բեմադրիչ Ալեքի հայրն է:

Գառզուի մասին պատմող ֆիլմը նայելուց հետո անկաշկանդ զրույց է սկսվում ամեն ինչի մասին. որից ներկայացնում ենք հատվածներ:

**– Ներկայացրեք. խնդրեմ. Թեհրանյան մշակութային միության կառուցվածքը. խնդիրները եւ մի փոքր էլ պատմությունը:**

– ԹՄՄ-ն հիմնված է առավելաբար ռամկավար ազատականի գերագույն ղեկավարության կողմն: Կուսակցությունը որպես քաղաքական մտածողություն հասած էր այն եզրակացության. թե արտասահմանի հայության գոյատեւումը պայմանավորված էր հայ լեզվի. ավանդների. պատմության եւ մշակույթի ծանոթությամբ. պահպանությամբ եւ տարածմամբ: Այդ գործին համար անհրաժեշտ էր եւ քարոյական. եւ նյութական. եւ մարդուժ. պայմաններ. որոնցմով պիտի կարենայինք հառաջիկա տասնամյակներում գաղութներում մեջ մեր ժողովուրդի ազգային դիմագիծը պահել եւ նոր սերունդ դաստիարակել:

ԹՄՄ-ն հիմնվեցավ Բեյրութի մեջ եւ շատ շուտով տարածվեցավ Միջին Արեւելքի բոլոր երկիրներու մեջ. ունեցավ իր մասնաճյուղերը: Հիմնադիրներու մեջ էին կուսակցական կարկառուն դեմքեր՝ որոնք Բարունակ Թովմասյան. Հրաչյա Սեդրակյան. Մանսուրն Համբարձում Բերբերյան. Հայկաշեն Ուզունյան:

Կանադայի. Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներու մեջ ԹՄՄ-ի գործունեությունը կարգավորելու համար հարկավոր էր կենտրոնական մարմին մը. եւ այդ մարմինը. Միջին Արեւելքի գաղութների ցավալի նոսրացմանը եւ թալացմանը զուգընթաց. կարծես թե ձեւով մը դարձավ ԹՄՄ-ի կենտրոնական ղեկավարություն եւ իր հովանու տակ առավ մշակութային եւ կրթական բազմաթիվ հաստատություններ. հատկապես Բեյրութի Թեհրանյան վարժարանը. երկրորդ վարժարանը հիմնեց հայահոծ Լոս Անջելսի Հոլիվուդ թաղամասին մեջ. ԹՄՄ Տիգրանյան վարժարանը. հրատարակություններ. վարժարաններ. մշակութային ձեռնարկներ. թատերախմբեր. պարի խումբեր. երիտասարդական կազմակերպություններ. նաեւ. վերջին տասնամյակներում. իր կենտրոնատեղիները: Զորօրինակ. Մոնրեալի հոյակապ կենտրոնը. Նյու Յորքի Մանհեթենի կենտրոնը. Պասադենայի Պեկեսքուրյան կենտրոնը: Ասոնք դարձան ձեւով մը տարուկ միջավայր մեր երիտասարդությանը հայոց լեզվով. հայ մշակույթով դաստիարակելուն: Սկսեցինք հրատարակել նաեւ թերթեր. հատկապես Մոնրեալի «Աղագայ» թերթը:

Մեր նպատակն է արվեստներուն եւ արվեստագետներուն. մամուլին. գրականությանը օժանդակել. քաջալերել. մեր մշակութային գանձերը ծանոթացնել հայ եւ օտար հասարակությանը: Հիմնադրման օրեն իսկ ԹՄՄ-ն մնայուն նպատակ է դարձուցել Հայաստանի եւ Սփյուռքի մշակութային կարերու ամրապնդումը: Ան անցնող տասնամյակներու մեջ իսկապես միակ հաստատությունը մնացած է. որ պահպաներ էր մշակութային կարերը Հայաստանի հետ. հակառակ տիրող կարգերու խժդժություններուն կամ դժվարություններուն: Ան առաջին կազմակերպությունն էր. որ Սփյուռք բերավ զանազան խումբեր. ինչպես պարի պետական անսամբլը. Սունդուկյան թատերախումբը եւ այլն:

**– Հայրենի ժողովրդի համար պարզ չէ. թե ԹՄՄ-ն եւ ՌԱԿ-ը կառուցվածքային տեսակետից ի՞նչ առնչություն ունեն: ԹՄՄ-ն մտնու՞մ է ՌԱԿ-ի մեջ որպես կուսակցության օղակներից մեկը. թե այն առանձին միություն է: Այսինքն. նրա վրա. արդյո՞ք. կազմակերպական տեսակետից կա՞ կուսակցական թելադրանք. թե անկախ է:**

– Ամերիկային մեջ ԹՄՄ-ն դրազերծ կազմակերպություն է: Ամերիկյան ընբռնումով ասոնք այն կազմակերպություններն են. որոնք մշակութային են. կրթական. բարեսիրական: Ասոնք կկոչվին tax-exempt. այսինքն՝ դրազերծ. այսինքն. եթե երբեւէ ամերիկյան բաղաքացին 100 դոլլար նվեր ընե ԹՄՄ-ին. զայն կդակսեցնե իր տարեկան եկամուտեն եւ ասոնք վրա պետական տուրք չի գար: Պետականորեն դրազերծ մնալու համար այս կազմակերպությունները չեն կարող քաղաքական գործունեություն ունենալ. ասոնք ոչ քաղաքական կազմակերպություններ են: Ուրեմն. ուղղակի կերպով. ԹՄՄ-ն իրավական գետնի վրա ՌԱԿ-են անկախ մշակութային կազմակերպություն է: Սակայն կա ներքին. բարոյական զորավոր կապ. որ հիմնական է եւ ապիկա է. որ մեզի կկառավարե: Ան ալ հետեւյալ ձեւով է. կենտրոնական վարչության մնայուն ինն անդամները ռամկավարներ են. կուսակցական ղեկավարներ: Առհասարա. բոլոր ռամկավարները անդամ են նաեւ Թեհրանի Թեհրանյան ջախջախիչ մեծամասնությունը կուսակցական է: Իմարկե. կան նաեւ ոչ կուսակցական. համակիր տարրեր:

**– Հայաստանում ստեղծվել է Թեհրանյան մշակութային միություն: Կապ կա՞. արդյոք. Սփյուռքի ԹՄՄ-ի եւ նրանց միջեւ. եթե այո. ինչպե՞ս եք իրականացնում այդ կապը:**

– Առաջին իսկ օրեն. անշուշտ թե կապ կար: Մեր ԹՄՄ-ի կենտրոնական վարչության անդամները ներկա եղան. երբ Երեւանի մեջ ԹՄՄ-ն հիմնվեցավ: Ուրեմն ծնունդի դայակը եւ ծնունդի մասնակիցը արտասահմանի ԹՄՄ-ն է: Եւ Հայաստանի մեջ հիմնված ԹՄՄ-ն կկապեմք որպես քույր կազմակերպություն մեզի: Սակայն հարաբերությունները տակավին չեն սերտաճած այն իմաստով. որ վարչական գետնի վրա կապերը տակավին թույլ են: Անշուշտ. մեր փափագը պիտի ըլլա. որ Հայաստանի ԹՄՄ-ն. արտասահմանի Թեհրանյանի պես. հանդես գա որպես Հայաստանի ՌԱԿ-ի մշակութային թեւ:

**– Մի քանի խոսք ձեր ընտանիքի. զավակների մասին:**

– Երկու զավակ ունիմ Ալեքը. որ 27 տարեկան է եւ Ալինը՝ 23: Երբ Ամերիկա եկանք. այն ատեն հայկական վարժարան չկար եւ կինս՝ Սեսիլ Քեշիշյանը. որ Մելրոնյանի շրջանավարտ է. զորավոր ազգային զգացումներով դաստիարակված. սկսավ տանը մեր երկու զավակներուն հայերեն լեզուն սովորեցնել: Անոնք հայերեն կխոսին. հայերեն կկարդան. հայ կզգան: Գաղութներեն մեկը շատ պարզ էր. տան մեջ արգիլված էր եւ արգիլված է մինչեւ հիմա անգլերեն խոսիլ: Երբ մեզմե որեւէ մեկը անոնց անգլերեն հարցում ընե. անոնք հայերեն կպատասխանին: Երկու զավակներս ալ ընդունակություններ ունին: Ալեքը ավարտեց Հարվարդի համալսարանը: Հարվարդից հետո երկու տարի աշխատելով Հոլիվուդի մեջ. սկսավ մեծ երգիչներու տեսաժապավեններ ընել: Ալեքին հաջողությունը պայթեցավ. երբ աշխարհահռչակ Մադոննան խնդրեց անոր նկարահանել իր համաշխարհային շրջադիսյը. ան ֆիլմի վերածել: Ան ֆիլմով Ալեքը մեծ հաջողություն ունեցավ: Ատեն ետ անոր շատ առաջարկություններ եղան:

Երբ Ալեքը շրջանավարտ էր. իրեն խնդրվեցավ ազգային մեր ջարդերուն. մեծ եղեռնի մասին փաստագրական ֆիլմ մը պատրաստել: Մասնավորապես Բարեգործականի նախագահ Լուիզ Մանուկյան-Սիմոնը ուզեց աս: Ալեքը այն ատեն ըսավ Լուիզին. «Չեմ ուզեր փաստագրական ֆիլմ պատրաստել: Հայ ընդանրը եւ եղեռնը պետք է տալ միջազգային գետնի վրա. որպես ընդհանուր պատմություն մը. այնպես. ինչպես Հանրի Վերնոյ կընե իր «Մայրիկ» ֆիլմին մեջ: Երբ մեծնամ. երբ միջազգային հաջող բեմադրիչ դառնամ. պիտի ստեղծեմ գործ մը. որ իր մարդկայնական կողմով հանդերձ. երկրորդական պլանի վրա հայ եղեռնը. հայ ջարդերը. հայ կյանքը ցույց տա. որպեսզի օտարը տեսնելով այդ. հուզվի եւ ճանչնա մեր պատմությունը»:

Հ. Գ.

# Դիմելու ո՞ր ձեւն է նախընտրելի

Ամեն անգամ. երբ հայ իրականության մեջ տեղի են ունենում երջադարձային փոփոխություններ. դրանք արտացոլվում են հայերենի մեջ: Դա բնական է. որովհետեւ լեզուն է. որ ամենից շատ է արձագանքում հասարակության կյանքի եւ մտածողության երեւույթներին: Մեր օրերում եւս հայերենի բառապաշարում կատարվում են որոշակի տեղաշարժեր. զգալի տեղ են գրավում նոր երեւույթների անվանման. հների վերանվանման միտումներն ու փորձերը: Նման տեղաշարժ է նկատվում պատվանունների հարցում. որի հետեւանքն այն է. որ այսօր գործածվում են մեծ թվով իրար զուգահեռ ձեւեր:

Հայերենի բառապաշարի մի կարեւոր մասն են կազմում պատվանունները: Պատվանունն այն բառն է. որ դրվում է այս կամ այն անձի անվան վրա. որպեսզի արտահայտի այդ անձին դիմողի վերաբերմունքը: Այդ ձեւով խոսողը կամենում է շահել խոսակցի ուշադրությունը. նրան հաղորդակից դարձնել իր խոսքին: Այսպես. երբ ասում ենք **ընկեր** Վրթանեսյան. **պարոն** Վարդան Մարտիրոսյան. **տիկին** Հրանուշ Ղուկասյան. **տիար** Սողոմոն Արիստակեսյան եւ այլն. առաջ **ընկեր. պարոն. տիկին. տիար** եւ նման բառերով պատիվ ենք անում հիշյալ անձանց՝ մասնակից դարձնելու մեր մտքերին: Պատվանունները բավական հաճախական կիրառության բառեր են. եւ դրանց գործածությունը պահանջում է ամենայն լրջություն եւ բծախնդրություն:

Մեր օրերում. ցավոք. մայրենի լեզվի շատ հարցերի եւ խնդիրների թվում բավական անկանոն դարձավ նաեւ պատվանունների գործածությունը: Մամուլում եւ հրապարակային ելույթներում հաճախ ենք ականատես լինում նման ձեւերի անպատշաճ եւ անտեղի գործածությունների: Դա թերեւս ամենից առաջ բացատրվում է նրանով. որ առայսօր անորոշ է մնում մայրենի լեզվի նկատմամբ պետական հոգածության հարցի լուծումը:

Պատվանուններն ավելի լայն իմաստով կոչվում են նաեւ դիմելու ձեւեր. սրանք ավելի շատ զգացական վերաբերմունք են արտահայտում. քան պատվանունները: Դիմելու ձեւերը կարող են լինել ոչ միայն պատվանունները. այլեւ մյուս կարգի բառերը: Դրանք սովորաբար ածականներ են. օրինակ՝ **սիրելի** Հակոբյան. **մեծարգո** Մնացականյան. **հարգելի** Տիգրան. **մեծահարգ** Գարեգինյան եւ այլն: Այստեղ **սիրելի. մեծարգո. հարգելի. մեծահարգ** եւ նման բառերն առհասարակ դիմելու ձեւեր են եւ ոչ թե կոնկրետ պատվանուններ:

Մեր լեզվի պատմության փաստերը ցույց են տալիս. որ տարբեր ժամանակներում գործածվելիս են եղել զանազան կարգի պատվանուններ. ըստ որում թե՛ բնիկ. թե՛ օտար կամ փոխառյալ: Ավելին. գրավոր հուշարձաններից տեղեկանում ենք. թե ինչպիսի տեսակետներ ու կարծիքներ են արտահայտվել այս կամ այն պատվանվան գործածության վերաբերյալ: Եղել են նաեւ սուր բանավեճեր. մշակութային-լեզվական տարակարծություններ: Այսպես. հայտնի է. որ անցյալ դարի կեսերից սկսած հայ պարբերական մամուլում բուռն վեճեր են տեղի ունեցել այնպիսի պատվանունների գործածության շուրջ. ինչպիսին են **տեր. պարոն. աղա** բառերը: Այդ վեճերին անդրադարձել են. օրինակ. *«Մասյաց աղավնի»*. *«Արշալույս Արարատյան»*. *«Մեղու»* եւ այլ պարբերականներ:

Այսօր որոշակի անհամաձայնություն կա **ընկեր. պարոն. տիար. տիկին** եւ նման մի քանի պատվանունների գործածության հարցում: Եւ քանի որ բացակայում է պետական որեւէ կանոնական մոտեցում. ուստի տարբեր անձանց եւ ընկերությունների. նույնիսկ կուսակցությունների ու խմբակցությունների կողմից նկատվում է հիշյալ պատվանունների գործածության ակնհայտ տարբերություն. որոշակի հակառակություն: Մեզանում մի ժամանակ տիրապետող էր **ընկեր** բառը. որին միտումնավոր հակադրվեց **պարոնը**: Առաջինը զուտ կուսակցական դիմելաձեւ է. երկրորդը՝ փոխառյալ *(պարոնը եւրոպական baron տիտղոսի տարբերակումն է)*:

Քանի որ խախտվել էր **ընկեր** ասելու պարտադիր ավանդույթը. ուստի **պարոն** բառին զուգահեռ ոմանք գործածում են հայեցի **տիար. տիկին** եւ այլ պատվանուններ: Ստացվել է մի ոչ կանոնավոր վիճակ. որից դուրս գալն այնքան էլ հեշտ չէ. մանավանդ որ **պարոն** առաջները թեթեւ են վերաբերվում այդ բառին. **ընկեր** ասողներն այնքան էլ հետեւությամբ չեն զիջում: Կան նաեւ այդ բառը սկզբունքորեն գործածողներ. որոնք ամենեւին միտք չունեն այն փոխարինելու մեկ այլ բառով: Մասավորականը նախընտրում է թե՛ մեկը եւ թե՛ մյուսը. ավելին՝ կամենում է նոր բառեր օգտագործել. ասենք՝ **տիար. տիկին** եւ նման ձեւեր: Այս պայմաններում է. որ հարկ ենք համարում որոշակի բացատրություն տալ հիշյալ բառերի կազմության եւ ծագման վերաբերյալ: Դա թերեւս օգնի դրանց կիրառության հարցում որոշակի վերաբերմունք ունենալուն:

Չնայած իր միակողմանիությանը. որ վերջին ժամանակների արդյունք է. **ընկեր** բառը մեզանում շատ հնուց է գործածվում. 5-րդ դարից ի վեր: Ականավոր հայագետ Անտուան Մեյեն գտնում էր. որ **ընկեր** բառը պատճենված է լատիներեն companio («ընկեր. հացակից») բառից: Այն մշտապես եղել է մի սովորական բառ. սակայն վերջին տասնամյակներում հայտնվեց «Ֆետիշացված» վիճակում:

Այդ վերջին հանգամանքն էլ եղավ թերեւս այն միակ պատճառը. որ այդ բառը. իբրեւ պատվանուն. դուրս վտարվեց մեր լեզվի գործուն բառապաշարից. ավելի շատ փոխարինվեց **պարոն** բառով: Նախկինում այս բառը մերժվել էր՝ իբրեւ բուրժուական. մեր օրերում՝ վերադարձվեց. որպես ժողովրդական: **Պարոն**-ը օտար բառ է. փոխ է առնված հին Ֆրանսերեն baron («տեր. իշխանավոր») ձեւից. որ մեզանում գործածվում է ավելի ուշ. քան **ընկեր** բառը: Լինելով ոչ բնիկ հայերեն բառ՝ դրանից այսօր հնարավոր չէ նոր ձեւեր կազմել. օրինակ չի կարելի ասել **պարոնուհի**: Սա լուրջ առարկություն է այդ բառն ընդունելու համար: Մյուս առարկությունը բառի փոխառյալ. ոչ բնիկ լինելն է: Երբ **ընկերը** չենք գործածելու հատուկ նկատառումով. ապա **պարոն** բառից կարելի է հրաժարվել բերեւս հիշյալ նկատառումներով:

Հրաժարվելու մեկ այլ նկատառումն էլ այն է. որ հայերենում ունենք ավելի լավ. բառակազմորեն ավելի կենսունակ բառ. դա **տիար** պատվանունն է: Վերջինս շատ հին կազմություն ունի. ծագում է բնիկ հայերենի **տի** («մեծ»). եւ **այր** («մարդ. տղամարդ») բառերից. որի ավելի հին ձեւերն են եղել **տիայր. տէայր** բառերը: Այդ բառերից են գոյացել **տեր. տերություն. անտերունչ** եւ այլն բառերը: Լինելով բնիկ կազմության մի բառ՝ այն կենսունակ է մինչեւ մեր օրերը. հիմք է հանդիսացել հայեցի բազում կազմությունների. ինչպես՝ **տիկին. տիրուհի** եւ այլն: Վերջիններից հատկապես **տիկին** ձեւը կարող է գործածվել իբրեւ **տիար** բառի իգականանիշ զուգահեռը:

Վերջերս վճիռ է կայացվել արեւելահայ գրական լեզվում հանձնարարելի համարել **տիար** բառի **տյար** ձեւի գործածությունը. որը մտածելու տեղիք է տալիս: Նշենք նաեւ. որ մեզ հարեւան ժողովուրդներն իրենց լեզվում վաղուց է. ինչ զուգակշռված ձեւով օգտագործում են արական եւ իգական սեռի անձանց վերաբերող միեւնույն արմատից ծագող բառեր: Իսկ մեզանում թերեւս այդպիսին էլ կարող են լինել մեր **տիար** եւ **տիկին**. այլեւ **տիրուհի** պատվանունները:

Հիշյալ ձեւերը. կարծում ենք. ավելի նախընտրելի են. քան **ընկեր. պարոն** եւ նմանները: Ուստի ժամանակն է. որ մեզանում առաջին հերթին գործածենք **տիար** եւ **տիկին** պատվանունները. մանավանդ որ մտավորականների մի որոշակի մասը հակված է այդ ձեւերի գործածությանը:

Վազգեն ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Բանասիրության դոկտոր

digitised by A.R.A.R.@

# Իմ վարչապետության ամենածանր

## Նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը պատասխանում է մեր թղթակից

**– Արդեն 4 ամիս է անցել ձեր հրաժարականից: Այդ ընթացքում ավելի ծանրացավ հանրապետության տնտեսական վիճակը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ դուք կանխազգալով ծմռան դժվարությունները, հրաժարվեցիք պատասխանատվությունից: Այս դեպքում ո՞վ հաղթեց. ձեր սկզբունքնե՞ր, թե իրականության դառը հեռանկարը:**

Ղարաբաղի ադրբեջանական գյուղերում Ադրբեջանը մեծ արտոնություններ է սահմանել, որպեսզի բնակիչները դուրս չգան: Նրանց տալիս են մեծ գումարներ, ընդհուպ մինչեւ արտասահմանյան կահույք: Ադրբեջանական Ջամիլու գյուղում, որտեղից դեկտեմբերի վերջերին վռնդվեցին ադրբեջանցիները եւ որտեղից մշտապես կրակում էին Ստեփանակերտի վրա, բնակիչները չէին հասցրել փախչելիս իրենց ունեցվածքը տանել: Այն ամբողջությամբ հայերը այրել էին, սակայն պատմում էին, որ նախկինում այդ գյուղացիները չեն ունեցել այդքան ունեցվածք: Այսօր դարաբաղցիներն ասում են, թե իրենց համար գենք ստանալու աղբյուր է դարձել նաեւ աղրբեջանական բանակը, որի զինվորները շատ լավ են զինված, բայց վատ են կռվում: Կան բազմաթիվ փաստեր, ցույց տալու հայերի եւ ադրբեջանցիների մարտունակությունը: Ըստ հավաստի տվյալների, միայն Շահումյանի երջանում անցած տարի սեպտեմբերին զոհվել է 11 հայ, 262 ադրբեջանցի: Որոշես կանոն, հայկական կողմից մեծ մասամբ զոհվում են կանայք եւ երեխաները, այն էլ նշանառուների կրակոցներից:

*«Հադրութի երջանի գործողությունը,-* ասում է ԼՂՀ խորհրդարանի անդամ Լեւոն Մելիք-Շահնազարյանը,- *երբ ազատագրեցինք Ծամձորը, Սարիշենը եւ հեռուստաաշտարակը, իսկապես եղել է լավագույն արհեստավարժ բանակի ավանդույթներով: Հեռուստաաշտարակի ազատագրումով մենք նրանց ազատագրվեցին եւս մի քանի գյուղեր, Խանձաձոր, Մյուլիդարա, Քարագլուխ: Յավոք, այդ մասին շատ քիչ է խոսվել»:*

«Ստեփանակերտում է վճռվում Արցախի ճակատագիրը»: Այսպես արտահայտվեց դեռեւս Ստեփանակերտում գտնված ժամանակ ներքին զորքերի պատերազմական անձանցից մեկը: Քաղաքը շատ ծանր վիճակում է գտնվում: Չկա հաց, ջուր, էլեկտրականություն, գազի բացակայության պատճառով բնակիչներն սկսել էին մայրերի ծառերը կտրել: Այն կտրված է արտաքին աշխարհից: Մարդիկ արդեն չորրորդ ամիսն է, ինչ աշխատավարձ չեն ստանում, գյուղերից ճանապարհների վտանգավորության եւ վառելիքի բացակայության պատճառով գյուղացիները չեն կարողանում մթերք հասցնել Ստեփանակերտ: Եթե շուկայում մի ժամանակ արդեւաբերություն էր տեղի ունենում, օրինակ՝ երկու կիլոգրամ շաքարը փոխանակում էին մեկ կիլոգրամ պանրով, այժմ դրա հնարավորությունն անգամ չկա:

Մարդկային ուժերի եւ զինամթերքի պակասության պատճառով դեկտեմբերի 30-ին ես նահանջելով Կրկժանի բարձունքները, հայ ազատամարտիկների ոգին չի ընկճվել: Նրանք ասում են, որ ադրբեջանցիները այնուամենայնիվ, չեն կարող այդպես շարունակ դիմադրել, որովհետեւ չգիտեն, թե ինչի համար են կռվում: Իսկ արցախցին շատ լավ գիտե, թե ինչ է նշանակում «այստեղով բուրք է անցել» արտահայտությունը: Այսօր Կրկժանից ադրբեջանցի բնակիչները հեռացել են, իսկ չնայած վտանգավորությանն ու լարվածությանը, հայերը չեն լքել իրենց տները: Նրանք չունեն նահանջի տեղ, այդտեղ իրենց պապերի գերեզմաններն են:

Կարծես թե պարզ չէ, թե դեռ որքան է տեւելու Արցախի պատերազմը: Սակայն պատերազմական դրությունում ժողովուրդն ընտրեց իր խորհրդարանը, նախագահին, վստահ լինելով, որ իրենք պետք է լուծեն իրենց խնդիրը: Չնայած հայացքների որոշ տարբերությանը, խորհրդարանի անդամների մտահոգությունը մեկն է. պահպանել ներքին կայուն վիճակ, քանի որ կանգնած են թշնամու առջեւ: Թե այսուհետեւ ինչպիսի քաղաքական գործընթացներ տեղի կունենան Արցախում, ժամանակը ցույց կտա: Զորի Բալայանը զրույցի ժամանակ նշեց, որ շատ կարեւոր է համարում անմիջապես արտակարգ դրության մասին օրենքի ընդունումը: *«Ինչ վերաբերում է Ղարաբաղում ստեղծված իրավիճակի փոփոխությանը,* ասաց նա, *այն կապված է Հայաստանի խորհրդարան եւ պետություն, Ղարաբաղի խորհրդարան եւ պետություն հարաբերությունների հետ, առանց որի անհնար է պատկերացնել Ղարաբաղի փրկությունը»:* Այնուհետեւ նա նշեց, թե ինչպիսի գործնական օգնություն է անհրաժեշտ այսօր Ղարաբաղին. *«Առաջին հերթին դա պատերազմն է, երկրորդը՝ հիվանդների եւ վիրավորների խնամքը, երրորդը՝ կապի միջոցները եւ ամենակարեւորը՝ վառելիքը: Որքան էլ որ մենք խաղ ենք խաղում (ես այդպես եմ կարծում), այս երկու հանրապետությունը, երկու խորհրդարանը ինձ համար մեկ միավոր են»,* ասաց նա:

ԼՂՀ խորհրդարանի անդամ Լեւոն Մելիք-Շահնազարյանը, որը նույնպես առաջադրված էր նախագահի թեկնածու, սակայն իր ձայները գիջել էր Արթուր Մկրտչյանին, գրեցնում է, որ Ղարաբաղին առաջին հերթին անհրաժեշտ են երեք կարեւոր բաներ, հզոր բանակ, տնտեսության մակարդակի բարձրացումը մինչեւ ինքնաապահովման աստիճանի եւ խորհրդարանի գերիշխանությունը կյանքի բոլոր ոլորտներում:

*«Ես շատ լավ գիտեմ մեր եւ ադրբեջանցիների հնարավորությունները: Այսօր Ադրբեջանում տեղի է ունենում զանգվածային դասալքություն բանակից: Ղարաբաղը պետք է ցույց տա, որ պատրաստ է պաշտպանվելու: Այդ ժամանակ տեղի կունենա դարաբաղյան խնդրի համաձայնացումը»,* ասում է նա:

*«Այն, որ այսօր Ղարաբաղը անկախություն է հռչակել,-* ասաց ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը,- *պետք է ընդունել, որ այլընտրանք չկա: Կարծում եմ, որ սա քաղաքական պայքարի մի երջան է եւ վաղ թե ուշ վերամիավորումը պետք է կատարվի: Իսկ Ղարաբաղ-Ադրբեջան հարաբերությունները պետք է լինեն որպես հավասարը հավասարի: Այն ամենի ժամանակ, ինչ կատարվում է Արցախում, ինչքան տուժում են հայերը, նույնքան էլ՝ ադրբեջանցիները»:*

Այդ օրերին Արցախում էին գտնվում բարոնուհի Քերոլայն Քոկսը իր «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» խմբի հետ, որը Արցախ էր բերել 10 հազար դոլարի արժողության դեղորայք: Նրանց հատկապես հետաքրքրում էր մարդկային իրավունքների պաշտպանությունը Արցախում: *«Քրիստոնական կառավարությունը ցուցաբերում է մեծ անհանգստություն Արցախում մարդու իրավունքների խախտման համար: Երբ իրավիճակը չփոխվի Արցախում, Ադրբեջանը օգնություն չի ստանա Բրիտանիայից»,-* հայտարարեց հյուրերին եւ լրագրողներին բարոնուհի Քերոլայն Քոկսը:

Արցախ էին ժամանել նաեւ տարբեր հանրապետությունների խորհրդարանների շատ պատգամավորներ եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Դեկտեմբերի 8-ն էր, երբ հյուրերի խմբի հետ վերադարձանք Երեւան: Այդ օրը Ստեփանակերտում դեռ շարունակվում էր հանրապետության Գերագույն խորհրդի նիստը: Օրը շատ պայծառ էր, նման գարնանային:

Գայանե ԱՖՐԻԿՅԱՆ

# Նախիջեւանն ազգայնացնում է զենքը եւ տեխնիկան

**Նախիջեւանի Գերագույն մեջլիսը որոշում է ընդունել, որի համաձայն հանրապետության տարածքում տեղակայված զինված ուժերի ստորաբաժանումների բոլոր ռազմական եւ տնտեսական կառույցները, զենքը եւ տեխնիկան պատկանում են ինքնավար հանրապետությանը: Գերագույն մեջլիսը պարտադրել է այդ ստորաբաժանումների հրամանատարությանը տվյալներ ներկայացնել ամբողջ գույքի մասին եւ արգելել է այն դուրս հանել հանրապետության սահմաններից: Բացի այդ, ստորաբաժանումների հրամանատարությանը հանձնարարվել է առաջարկություններ ներկայացնել նրանց հետագա մնալու իրավական կարգավիճակի մասին: Որոշման մեջ նշվում է նաեւ, որ մինչեւ այդ հարցերի վերջնական լուծումը Նախիջեւանում տեղակայված զինված ուժերը պարտավոր են ենթարկվել Գերագույն մեջլիսին:**

**Մինչդեռ, ազատ են արձակվել Բաքու-Նախիջեւան գնացքից պատանդ վերցված վերջին երկու ուղեւորները: Այդ մասին հաղորդել են Նախիջեւանի Գերագույն մեջլիսի մամլո կենտրոնում: Տեղեկություն է ստացվել նաեւ, որ հունվարի 6-ից վերսկսվել է երկաթգծի Մեղրու եւ Նախիջեւանի հատվածներով անցնող բեռնատար գնացքների երթեւեկությունը:** ■

# Ռուցկոյը կողմնակից է խիստ վարչածեւի

**Ամեն ինչ չէ, որ հեզասահ է ընթանում նախագահ Ելցինի կառավարական շրջանակում, որտեղ ծգված կացություն է տիրում նախագահի աջ բազուկը համարվող փոխվարչապետ Գենադի Բուրբուլիսի եւ փոխնախագահ գնդապետ Ալեքսանդր Ռուցկոյի միջեւ, որ վերջերս հրապարակավ ճնշադատում է նաեւ նախագահ Ելցինին:**

Բուրբուլիսը գլխավորում է բարեփոխությունների ազատական թեւը եւ կառավարական պատասխանատու պաշտոնների է կոչել այն բոլոր երիտասարդ ուժերին, ովքեր ծրագրեցին Ռուսաստանի տնտեսության վերակառուցման նպատակով հարվածային միջոցառումների ծրագիրը, որի մաս է կազմում հունվարի 3-ին սկսված գների արձակումը: Հանրապետության տնտեսությունը վերականգնելու կամ բուժելու այս անժողովրդական ձեւին (Ելցինի համար նույնիսկ վտանգավոր հետեւանքներով հղի) դեմ էր փոխնախագահ Ռուցկոյը, որն սկսեց պայքար մղել Բուրբուլիսի ու նրա խմբակի դեմ: Օդուժի գնդապետ եւ Աֆղանստանի պատերազմի նախկին հերոս Ռուցկոյի անունն այժմ հիշատակվում է որպես Ելցինի ձախողության կամ ժողովրդական ընդդիմության դեմքում լավագույն թեկնածուի, որը կարող է գլխավորել խիստ վարչածեւի կողմնակից նոր կառավարությունը:

Ռուցկոյի հեղինակությունն անկում ապրեց, երբ նա Ելցինին սխալ խորհուրդ տվեց բանակ ուղարկել Չեչնո-Ինգուշեթիա՝ անկախականներին զսպելու: Անցյալ դեկտեմբերի 29-ին նախագահի մի հրամանագրով, Ռուցկոյից առնվեցին նրա բոլոր իրավասությունները, որոնցով նա վերահսկում եւ հակակշռում էր հինգ կարեւոր հանձնախմբեր, որոնց շարքում ռազմական արդյունաբերության վերափոխության հանձնախումբը: Այդ հրամանագրի հետեւում Ռուցկոյը տեսավ Բուրբուլիսի նախաձեռնությունը, մոռանալով, որ դրանից մի օր առաջ իր տված մի հարցազրույցի մեջ հայտարարել էր, թե Ռուսաստանում չկա «ոչ իշխանություն, ոչ էլ ռամկավարություն», այլ՝ «քաոս եւ անիշխանություն»: Եւ այդ վիճակի առողջացման դերակատարների մեջ նա հիշատակում էր գլխավորապես Բուրբուլիսի անունը:

Հակառակ իր կատարած խիստ քննադատություններին, Ռուցկոյը մտադրություն չունի հրաժարելու բարձր պաշտոնից, քանի որ, ասում է նա, ինքն այդ պաշտոնին տիրացել է համաժողովրդական քվեարկությամբ:

Իսկ դեկտեմբերի 27-ին *«Կոմսոմոլսկայա պրավդա»* թերթում Ռուցկոյը հայտնում էր, թե *«1984-ին Խ. Միությունը հզոր պետություն էր, նրա բանակը՝ աշխարհի հավասարակշռության լծակներից մեկը: Ենթադրյալ պերեստրոյկայի հետ սկսվեց տարբաղադրությունը: Հասանք այն օրին, երբ Մոսկվայում սպանները փողոց են դուրս գալիս քաղաքացիական հագուստով, որպեսզի չծեծվեն»:* Բնականաբար, այս խոսքերը ուղղակի խոսում են *«մեկուկես միլիոն սպանների եւ ենթասպաների արտից»,* որոնք, ըստ Ռուցկոյի, զրկված են բնակարան ունենալուց:

*«Մոսկովսկիե նովոստի»* թերթն այս շաբաթ հաստատում է էր, թե Ռուցկոյը գաղտնի ժողովների է մասնակցում նախկին համայնավար ղեկավարների եւ ռազմական արդյունաբերության պատասխանատուների հետ, ընտրելու համար հակաճգնաժամային մի ծրագիր. Ելցինի իշխանության դժվարության հանդիպելու պահին գործադրելու համար: Մ. Նահանգների դեսպան Ռոբերտ Սթրաուսը, զանց առնելով դիվանագիտական պատշաճությունները, երկու շաբաթ առաջ Վաշինգտոնում ասաց, թե Ռուցկոյն է *«ներկայացնում գլխավոր վտանգը»* Ելցինի համար, եւ թե *«նրա ժողովներին ներգրավում են բազմաթիվ մարդիկ»:*

Բուրբուլիսը կազմեց տնտեսական գերնախարարություն, որի ղեկավարությունը վստահվեց 35-ամյա Իգոր Գայդարին: Նրա բոլոր գործակիցները երիտասարդներ են եւ պատկանում են տնտեսական նոր դպրոցին: Այդ երիտասարդների ծրագիրն էր նաեւ կազմել տնտեսական մի համագործակցություն, որից դուրս էին մնալու տնտեսապես թույլ բոլոր հանրապետությունները, մասնավորապես Միջին Ասիայի հանրապետությունները: Արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը կիսում էր նրանց տեսակետները:

Ռուցկոյը հեգնում է այդ երիտասարդ պատասխանատուների ակադեմականությունը, չասելու համար դպրոցականությունը եւ իրողությունների անգիտությունը: Ըստ նրա, այդ տնտեսագետները. Արեւմուտքի իրենց գործընկերների հետ մեկտեղ, պատրաստվում են *«ծծել ֆինանսական զանգվածներին»,* գների բարձրացումով կամ անհակակշռությամբ:

Երկրի մի շարք երջաններում աշխատավորները գործադուլի են դիմել, որովհետեւ ոռճիկ չեն ստացել: Արտավասույր բարձրացող ինֆլյացիայի համադասասխան հնարավոր չէ ռուբլի տպել:

Բուրբուլիսի խորհրդով է նաեւ, որ նախագահ Ելցինն ստեղծեց ներքին գործերի գերնախարարություն, որի պետն է մի գերռասիական Վիկտոր Բարաննիկովը, որը հակառակ նոր տնտեսագետների, պատկանում է հին դպրոցին: Գայթակղություններն արդեն իսկ առկա են ոչնչացված թղթատանակների պատճառով, որտեղ խնդրո առարկա են ՊԱԿ-ի նախկին 20 ղեկավարները, որոնք մեղադրվել էին օգոստոյան հեղաշրջումից հետո եւ, սակայն, պատշրնի էին կոչվել Բարաննիկովի կողմից:

Ռուսական խորհրդարանը, նախագահությամբ Ելցինին հավատարիմ Ռուսլան Խասբուլատովի, երկրության է մատնվել Ելցինի բարեփոխումները պատշրանելու իր ցանկության եւ ամբողջաթիրության վերադարձի նկատմամբ իր մտավախության միջեւ: Մտավախությունը՝ որ կարող է նաեւ լինել հույս: Ռուսական խորհրդարանն այժմ ուժեղ ձայն չունի, քանի որ աշնանը քվեարկել էր, որ մինչեւ մեկ տարի չի կարող ընտրություններ կայացնել, եւ լիազոր իշխանությունը հանձնել էր Ելցինին: Այսուհանդերձ, այս բոլորը բավարար երաշխիք չեն կառավարության երկարակեցության:

Սոֆի ՇԵՀԱԲ

«Լը Մոնդ»-ի Մոսկվայի թղթակից

դեկտեմբեր 29-30, 1991

digitised by A.R.A.R.@

# Երկարակեցության գաղտնիքները

**Երկարակյացները դարի կենդանի հիշողությունն են: Ինչո՞ւ են նրանք հասել այդ տարիքին: Այս մասին է ֆրանսիական «Le Point» հանդեսի դեկտեմբերի վերջին համարներից մեկի հրապարակումը:**

Ներկայումս մոտ չորս հազար ֆրանսիացիներ ավելի քան 100 տարեկան են: Դեռ 30 տարի առաջ նրանց թիվը ընդամենը 200 էր: Տասը տարի հետո նրանք կլինեն մոտ տասը հազար: Դոկտոր Միշել Ալարի գլխավորությամբ *Իոյսեն* հասարակության կատարած էտ լուրջ հետազոտության համաձայն, 100-ից բարձր տարիք ունեցողները Ֆրանսիայում կազմում են բնակչության այն խումբը, որն ամենից արագ է բազմանում: Եւ այդ գործընթացը շարունակվում է: Ի դեպ, դա բնորոշ է ոչ միայն Ֆրանսիային: Մինչեւ 2000 թվականը 100 հազար ամերիկացիներ 100 տարեկանից մեծ կլինեն: Իսկ կես դար հետո նրանց թիվը կկազմի մոտ երկու միլիոն:

Երկարակեցության երեվույթը միշտ էլ զարմացրել ու հիացրել է մարդիկանց: Արդ, ո՞րն է դրա գաղտնիքը: Ոմանց կարծիքով, դա արյան ցածր ճնշումն է, ուրիշները ենթադրում են, որ մի փոքր գավաթ մուսկատը շատ բավարար ազդեցություն է գործում, շոկոլադի սիրահարները գովում են իրենց սովորությունը, շծխողների երկարակեցությունը նպաստում է հակաշախտային արտավին, ոմանք էլ երդվում են, որ մաքուր օդում աշխատելը լավագույն դեղամիջոցն է: Գուցե դա ճիշտ է: Սակայն 2700 երկարակյացների հետ զրուցելուց, ամեն տեսակ կլինիկական, կենսաբանական, ծագումնաբանական զննություններ անցկացնելուց հետո դոկտոր Ալարը երկմիտ է եւ հետեւյալ կերպ է ամփոփում իր հետազոտությունների արդյունքները. *«100-ամյա դառնալու համար պետք է ապրել ցանկանալ»:*

Իրոք, վիճակագրության հիման վրա կարելի է ընդհանուր գծերով տալ 100-ամյա մարդկանց նկարագիրը: Բայց տղամարդկանց առողջական վիճակը սովորաբար կանանցից ավելի բարվոք է: Օրինակ, երկարակյաց տղամարդկանց կեսը հիշողության կորուստներ չունի, մինչդեռ կանանց երկու երրորդը տառապում է դրանից:

Ի դեպ, Ֆրանսիացի գիտնականները պարզել են, որ երկարակյացների ուղեղը նույնպես պահպանում է «նեյրոնային պլաստիկությունը», այսինքն նեյրոնների թվի ասիճանական նվազումը փոխհատուցվում է մնացող բջիջների բազմաթիվ սերտաճումներով:

Առհասարակ, 100-ամյա մարդիկ բավական լավ առողջություն են ունենում: Եկեք ճիշտ հասկանանք: 100 տարեկանում մահացությունը դեռ չէ. նրանց 40 տոկոսը մահանում է մինչեւ 101 տարեկան դառնալը: Սակայն 100-ամյակին նախորդող վեց ամիսների ընթացքում մահանում է նրանց 50 տոկոսը: Այն տպավորությունն է ստեղծվում, թե 100-ամյակի բնագիծը հատելուց հետո վտանգը նվազում է: Ի դեպ, վիճակագրությունը ցույց է տալիս, որ 100-ամյա մարդիկ 90-ամյա էտ երկարակյացներից ավելի լավ առողջություն ունեն: Բժիշկները տասը բալանոց սանդղակով նրանց առողջական վիճակը գնահատում են վեց բալ:

Հարկ է նշել, որ 100-ամյա տղամարդու հասակը 1.62 մետր է, իսկ կանանց հասակը՝ 1.51 մետր, տղամարդկանց քաշը 59.5 կիլոգրամ է, կանանց քաշը՝ 48: Հետաքրքիր է, որ երկարակյացների 51 տոկոսն ունի կաղույտ աչքեր, ամբողջ բնակչության 31 տոկոսի դիմաց: Բայց վիճակագրությունը չի արտացոլում դոկտոր Ալարի նշած «ապրելու ցանկությունը»: Թերեւս նա նկատի ունի երկարակյացների հետաքրքրասիրությունը, հարմարվողականությունը եւ երբեմն էլ ծանր բնավորությունը:

Երկարակյացները սովորաբար կենսուրախ մարդիկ են: *«Ես միշտ սիրել եմ ծիծաղել: Երբ ես փոքր էի, բժիշկն ինձ ասում էր կտեսնես, նրանք, ովքեր երբեք չեն ծիծաղում, վատ բնավորություն ունեն»:* Իրոք, 104-ամյա Մարի-Անժել Լըրոյաժը ծիծաղում է: Նա ապրում է Լիմեյ Բրեւանի հիվանդանոցային կենտրոնում: Նրա փոքրիկ սենյակում կան տարբեր լուսանկարներ, այդ թվում՝ իր 102-ամյակին ու 103-ամյակին նվիրված թերթերի կտրածները: Տիկին Լըրոյաժը ասում է. *«Ես սիրում եմ բոլորին»* (բացի թերեւս սենյակի մեկ-երկու հարեւանուհիներից, որոնք ծիծաղկոտ չեն): Ինքը 12 տարեկանից ստիպված թողել է դպրոցը եւ աշխատել դաշտերում: *«Ամուսնը արթնանում էինք առավոտյան ժամը 2-ին եւ աշխատում մաքուր օդում: Կամ էլ արթնանում էինք ժամը 4-ին՝ կովերին կթելու համար: Երջանիկ էինք մեր ծնողների հետ»:* Այնքան երջանիկ, որ Մարի-Անժելը համառորեն հրաժարվում էր ամուսնանալ: Ի վերջո, մոր պահանջով ամուսնացել է 40 տարեկանում եւ ամուսնու հետ ապրել 45 տարի: Նրա կարծիքով, մեր դարաշրջանը հրաշալի է: Միակ մտահոգությունն այն է, որ *«այսօր այլեւս չեն ամուսնանում, միայն կենակցում են...»:*

Այսպիսին են բարքերը: 100 տարեկանները կարող են դրանք քննադատել, հավանություն չտալ, բայց նրանք չափազանց էտ բան են տեսել եւ կարողացել են հարմարվել ամեն ինչի: Տեխնիկայի նորույթները՝ էլեկտրականությունը, ավտոմոբիլը, հեռախոսը, լվացքի մեքենան նրանց համար առօրեական են դարձել, եւ թերեւս միայն ինֆլյացիոն է շարունակում ուժգին տպավորություն գործել:

Նրանց գրեթե բոլորի հարմարվելուն օգնել է աշխատանքը: 105-ամյա Ժյուլի Լըլաժը աշխատել է 13-ից մինչեւ 80 տարեկան հասակը: Սկզբում նա աշխատում էր գյուղատնտեսական արհեստանոցում, իսկ այնուհետեւ դարձավ գործարար կին եւ ճանապարհորդում էր Շվեյցարիայից մինչեւ Իտալիա ու Մարսել:

Մեր դարի մասին ի՞նչ են պատմում երկարակյացները: Մեծ մասամբ դա գյուղական Ֆրանսիայի պարզ ու հասարակ կյանքն է, ընտանեկան, աշխատանքային պատմություններ, ինչպես նաեւ պատերազմի հետ կապված պատմություններ: Առաջին աշխարհամարտը համընկավ նրանց երիտասարդ տարիներին եւ էտերի կյանքը խեղեց կամ հեղաշրջեց: Նրանք պատմում են ծանր կյանքի, պատերազմների, հարազատների, հաճախ նաեւ երեխաների կորուստների մասին, եւ այդ ամենը նրանց մեջ ստեղծում է մի տեսակ հաշտվողականություն եւ մահվան հանդեպ հանգստություն:

Է՞լ ինչով է պայմանավորված երկարակեցությունը: Ամերիկացի 67-ամյա հետազոտող Ռոյ Ուոլֆորդը հավակնում է հասնել 120-ամյա տարիքի եւ մեր սերունդներին խոստանում է էլ ավելին՝ 150, 180, նույնիսկ 300 տարվա կյանք եւ մանավանդ՝ ջահելություն: Նրա կարծիքով, մարդիկ կկարողանան աշխատել մինչեւ 90 կամ 100 տարեկան դառնալը վաստակած հանգստի անցնելուց առաջ: Ռոյ Ուոլֆորդի կարծիքով, նույնիսկ 60-ամյա կամ 70-ամյա կանանց առողջական լավ վիճակը թույլ կտա աղագայում զգալիորեն հետաձգել դաշտանադադարը եւ մայրանալու հնարավորությունը հասցնել մինչեւ 70 տարեկանի:

Նրա տեսությունը հիմնվում է մասնավորապես իր անձնակազմի կողմից ուսումնասիրվող մկների հետազոտությունների վրա, ինչպես նաեւ ԱՄՆ-ի ծերաբանության ազգային հասարակության ուսումնասիրությունների վրա: Ուոլֆորդը պարզել է, որ այն մկները, որոնց օրաբաժնի կալորիականությունը լավ համակշռված է, բայց 30-40 տոկոսով կրճատված, որոշակիորեն ավելի երկար են ապրում, քան այն մկները, որոնք սնունդ են ստանում իրենց ազատի չափ: Այդ կոմ [illegible] ունի աշխարհի բոլոր լաբորատորիաներում: Տասնյակ հազարավոր փորձամկներ կրճատված կալորիականություն ունեցող օրաբաժնով ապրում են մինչեւ 53 ամիս, մինչդեռ լաբորատորիայում սովորական սնունդ ստացող մկները ապրում են 34 ամիս: Ուոլֆորդը եւ իր աշխատակիցները ենթադրում են, որ մարդիկ նույնպես համանման պայմաններում կարող են ապրել 120, նույնիսկ 150 տարի եւ ավելի:

*«Ծերաբանության ազգային հասարակությունում իմը հազար կրծողների վրա վերջերս կատարված մի հետազոտություն ամբողջությամբ է այն գաղափարը, որ կալորիականության կրճատումը դրա մեխանիզմների բացահայտման դեպքում կկարողանա նոր ուղիներ հարթել ծերության հետ կապված հիվանդությունների վերացման կամ կրճատման համար»:*

Մինչ Ռոյ Ուոլֆորդը իմն իր վրա կատարեցի սեփական տեսության ճշտությունը (դա կերեւա մոտ 50 տարի հետո), Ֆրանսիայում *Իոյսեն* հասարակության հետազոտության արդյունքները կարծես թե հաստատում են նրա տեսակետը:

Հարյուրամյա երկարակյացների համար չափավորությունը կարծես բնավորության արմատական գիծ լինի: Նրանց մենամենությունը երբեք ծայրահեղության մեջ չի ընկել: Ոմանք, ժամանակին չափից փոքր-ինչ ավելի ծխած կամ խմած լինելով, արագորեն հրաժարվել են եւ կարողացել են շտապորեն իրենց այդ սովորությունները: *Իոյսեն* հասարակության ուսումնասիրությունների ղեկավար դոկտոր Միշել Ալարի կարծիքով, *«գոյություն ունեն երկարակյացների զույգեր, որոնք համատեղ երկարակեցության համար պարտական են միայն առողջապահական միեւնույն սկզբունքներին, որոնք իրենց պահպանել են ամբողջ կյանքում: Ժառանգականությունը եւ շրջակա միջավայրի պայմանները այս գործում ազդում են հավասար չափով»: «Իմ կնոջ տատը մահացավ 104 տարեկանում,* նշում է Ֆրանսիացի բժիշկ Բեռնար Ֆորեսը: *Մենք երբեք չենք տեսել, որ նա լրիվ վերջացնի իր ափսեի պարունակությունը»:*

Այնուամենայնիվ, հայտնի չէ, թե արդյոք երկարակյա՞ց են եղել Ռոյ Ուոլֆորդի երկու ծնողները: Քանզի *Իոյսեն* հասարակության հետազոտություններից մեկի համաձայն, դա գրեթե վճռորոշ չափանիշ է: Արդ, ծագումնաբանական նախադրյալները կարեւոր դեր են խաղում:

Բայց այստեղ պետք է ճշգրտել, որ ընդհանրապես երկարակյացների երկու ծնողներն էլ երկարակյաց են լինում: Երկուսն էլ, դա կարեւոր է: *«Տնտեսանորեն պատճառներ են եղել կարծելու, թե երկարակեցությունը փոխանցվում է մայրերի միջոցով,* ընդգծում է պրոֆեսոր Բեռնար Ֆորեսը: *Այդ վարկածը մեր ուսումնասիրությամբ չհաստատվեց, քանզի մեծ մասամբ երկու ծնողների կյանքի տեւողությունը գրեթե հավասար է լինում»:* ■

## ՄԱՐԶԱԿԱՆ

### *Ստամբուլը հավակնում է 2000 թվականի օլիմպիական խաղերին*

«Turkey is willing-Istanbul is ready». «Թուրքիան ցանկանում է-Ստամբուլն էլ պատրաստ է» անգլերեն այսպիսի նախադասությամբ է սկսվում Թուրքիայում՝ պատրաստված եւ այս երկրի տեսարժան վայրերի, մարզական ու այլ տիպի խոշոր կառույցների ծանոթացման գովազդային բնույթի տեսաժապավենը:

Այն պատվիրել է Թուրքիայի ազգային օլիմպիական կոմիտեն ուղարկելու համաշխարհային միջազգային կազմակերպությանը եւ համոզելու, որ 2000 թվականի օլիմպիական խաղերն անցկացվեն Ստամբուլում:

Բացի տեսաժապավենից, որի համար ծախսվել է ամերիկյան 35000 դոլար, Թուրքիան պատրաստել է նաեւ գունավոր հատուկ բացիկներ՝ պատկերված իր երկրի ամեն տեսակի մարզական կառույցներով ու կարելիություններով եւ ուղարկվել միջազգային մարզական պատկառազդու անհատների եւ ծանրակշիռ կազմակերպությունների:

Հայտնի է, որ 2000 թ. օլիմպիադան իրենց մոտ անցկացնելու ցանկություն են հայտնել նաեւ Ավստրալիան (Սիդնեյ), Չինաստանը (Պեկին), Բրազիլիան (Բրազիլ), Իտալիան (Միլան), Գերմանիան (Բեռլին) եւ Մեծ Բրիտանիան (Մանչեսթր):

Միջազգային օլիմպիական կոմիտեն, որի կազմի մեջ են մտնում 92 երկիր, 1993 թ. սեպտեմբերին Մոնտե-Կառլո քաղաքում վերջնական վճիռ կկայացնի, թե որ երկրում է անցկացվելու 2000 թ. համաշխարհային օլիմպիադան:

Թուրքիան գտնում է, որ պատրաստ է անցկացնելու օլիմպիական խաղերը եւ նախատեսում է ծախսել 10 տրիլիոն լիրա, որոնցից 15 տրիլիոնի եկամուտ ունենա: Այսինքն, մաքուր շահույթը ենթադրվում է 5 տրիլիոն լիրա (մեկ միլիարդ դոլար):

Ավելորդ չէ նշել, որ այն երկրները, որոնք իրավունք են ստանում անցկացնելու միջազգային խոշոր մրցումներ, որպես օրենք հետեւությամբ նաեւ վարկ են ստանում IMF-ի պես աշխարհի խոշոր ֆինանսական կազմակերպություններից: ■

### *Հայաստանը հրաժարվում է ԱՊՀ-ի առաջնություններից*

Տեղի ունեցավ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի հերթական նիստը: Որոշվեց անցկացնել ազգային անկախ առաջնություն:

Դա նշանակում է, որ «Արարատ»ն ու «Կոտայք»ն էլ չեն մասնակցի Անկախ պետությունների հանրակցության առաջնություններին: ■

### *«Արարատ»ը առաջատար*

Ժնեւում տեղի ունեցող մինի Ֆուտբոլի միջազգային մրցաշարում հաջող է հանդես գալիս երեւանի «Արարատ»ը: Առաջին տուրում հայ Ֆուտբոլիստները հանդիպեցին մրցումների կազմակերպիչ «Սերվետ» թիմի հետ: Արձանագրվեց ոչ-ոքի՝ 3:3: Երկու գոլի հեղինակ դարձավ Կարեն Մարկոսյանը, մեկ անգամ աչքի ընկավ Արտաշես Ադամյանը:

Երկրորդ տուրում «Արարատ»ը 3:1 հաշվով հաղթեց եւրոպայի հանրահայտ թիմերից մեկին՝ Դանիայի «Բրոնդբյու»ին, որը մինչ այդ շահել էր Գերմանիայում տեղի ունեցած մինի Ֆուտբոլի միջազգային մրցաշարը: «Արարատ»ից գոլակները խփեցին Ա. Ադամյանը, Ա. Սարգսյանը, Վ. Ավետիսյանը:

Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները՝ «Սպորտինգ» (Լիսաբոն) - «Կանն» (Ֆրանսիա) - 3:1 «Բրոնդբյու» - «Սպորտինգ» - 6:1

3 միավորով առաջատարը «Արարատ»ն է, 2-ական միավոր են վաստակել «Սպորտինգ»ն ու «Բրոնդբյու»ն: ■

### «Կոտայք»ի մարզիչը փոխվեց

Նոր մրցաշրջանին սկսեց նախապատրաստվել Աբովյանի «Կոտայք»ը: Փոխվել է «Կոտայք»ի գլխավոր մարզիչը: Սամվել Պետրոսյանի փոխարեն թիմի ղեկը մեկ տարվա ընմիջումից հետո կրկին ստանձնել է Նազար Պետրոսյանը: ■

### Դանիան հույսեր է պահպանում

ՈՒԵՖԱ-ի գրեգիդենտը հայտարարել է, թե ամառը Շվեդիայում կայանալիք Ֆուտբոլի եւրոպայի առաջնության եզրափակիչին Հարավսլավիայի փոխարեն հավանաբար կմասնակցի Դանիայի հավաքականը, քանի որ, եթե սերբերն ստանձին թիմ հանեն, խորվաթները կբողոքեն եւ ընդհակառակը:

Այդ հարցը ՈՒԵՖԱ-ն մտադիր է ՖԻՖԱ-ի ֆնարկմանը ներկայացնել, որի հերթական նիստը կայանալու է հունվարի 16-ին: ■

### Խաղացանկը հայտնի է

ԱՄՆ-ում 1994 թ. կայանալիք Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարերից առաջինը իրենց խաղացանկը հաստատեցին եւրոպական 6-րդ խմբի թիմերը: Այստեղ ընդգրկված են Ֆրանսիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Բուլղարիայի, Ֆինլանդիայի եւ Իսրայելի հավաքականները:

Մրցաշարն սկսվելու է 1992 թ. մայիսի 14-ին Ֆինլանդիա-Բուլղարիա մրցավեճով եւ ավարտվելու է 1993 թ. նոյեմբերի 17-ին Ֆրանսիա-Բուլղարիա հանդիպումով: ■

### Սամարանչը կժամանի Մոսկվա

Շվեյցարիայի Լոզան քաղաքում միջազգային օլիմպիական կոմիտեի գրեգիդենտ Խուան Անտոնիո Սամարանչը հայտարարեց, որ հունվարի 18-ին ժամանելու է Մոսկվա Ռուսաստանի նախագահ Ելցինի հետ ֆնարկելու Բարսելոնում այս տարի կայանալիք ամառային օլիմպիադային Անկախ պետությունների հանրակցության ներկայացուցիչների մասնակցության հարցը: ■

### *Վախճանվեց Դավիթ Համբարձումյանը*

Հայաստանի մարզաշխարհը ծանր կորուստ ունեցավ: Ուժերի ծաղկման շրջանում, դեռ 36-ամյակը չբոլորած, անսպասելիորեն կյանքից հեռացավ մարզական մեր երախտավորներից մեկը՝ ջրացատկի եւրոպայի կրկնակի չեմպիոն, օլիմպիական խաղերի մրցանակակիր, նախկին Խորհրդային Միության առաջնությունների անանխադեպ ռեկորդակիր՝ 14-ակի չեմպիոն, ըստորտի վաստակավոր վարպետ Դավիթ Գրիգորի Համբարձումյանը:

Հրաժեշտ տալով մեծ սպորտին, անվանի մարզիկը անմնացորդ նվիրումով աշխատանքի անցավ հարազատ «Դինամո» մարզընկերությունում: Չնայած երիտասարդ տարիքին, մեծ աշխատասիրության, մարդկային անկրկնելի հատկանիշների, բարձր կարգապահության շնորհիվ Դավիթ Համբարձումյանը կարճ ժամանակում նշանակվեց հանրապետության սպորտկոմիտեի նախագահի տեղակալ:

Դավիթ Գրիգորի Համբարձումյանի մահը նրա ճանաչողների եւ բոլոր մարզասերների համար խորը ցնցում էր: Նրա հիշատակը անջնջելի է:

Բաժինը վարում է Սուրեն ԲԱԴԱԼՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

# Ֆրանսիա-Հայաստան համագործակցությունը արդեն իրական է դառնում

Հայաստանից Ֆրանսիա են մեկնում 18 բարձրաստիճան կառավարական պաշտոնյաներ, որոնցի հետևեն հատուկ կառավարական գործերի դասընթացներին: Այս միջոցառման բոլոր ծախսերն իր վրա է վերցնում Ֆրանսիական կառավարությունը:

Քրիստիան Տեր-Ստեփանյանը, որը Ֆրանսահայտնակ է և արդեն մի քանի ամիս է, ինչ աշխատում է արտգործնախարարությունում որպես Երևանի բաժանմունքի պետ, տեղեկություններ տվեց և պատասխանեց մեր հարցերին:

– Արդեն ամեն ինչ պատրաստ է. 18 հատուկ ընտրյալ պաշտոնյաներ և երկու բարգմանիչ պետք է այս տարվա փետրվարի 2-ին մեկնեն Փարիզ, որ հետևյալ օրն իսկ, ամսի 3-ին, պետք է սկսվեն նրանց դասընթացները,– ասաց նա: – Նրանք Փարիզում պիտի հետևեն Հասարակական կառավարման միջազգային ինստիտուտի դասընթացներին, որոնք ուղիղ կրցված են Ֆրանսիայի վարչապետությանը:

Այս ինստիտուտում առաջին անգամը չէ, որ արտասահմանի պետական պաշտոնյաներ են դասընթացների հետևում, սակայն միտ չէ, որ բոլոր ծախսերը Ֆրանսիական կառավարությունն է ստանձնում: Դասընթացները տրվում են կամ ըստ երկու երկրների միջև կնքված բարձր մակարդակի պայմանագրերի, կամ էլ հատուկ դասախոսներ են գործուղում այս երկրներ, որոնք պահանջ են ներկայացնում: Մեր դեպքում առաջինն է:

Ովքե՞ր են այս «հատուկ գործուղվողները», ո՞ր է ընտրել նրանց: Քրիստիան Տեր-Ստեփանյանն ասաց, թե *«ամբողջ ցուցակը չեմ կարող տալ, սակայն կարող եմ նշել, որ այս մարդկանց կառավարությունն ընտրեց հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, ելնելով և հարցափորձ անցկացնելով բոլոր թեկնածուների հետ»:*

Տեր-Ստեփանյանը նշեց նաև, թե այս ինստիտուտում դասավանդվում են տարբեր թեմաներ, այս անգամվա դասընթացները վերաբերում են զուտ տնտեսական նյութերին: Դրա համար է, որ ցուցակը պատրաստելիս հատուկ ուշադրություն դարձվել է, որպեսզի թեկնածուները տնտեսության հետ առնչվող լայն ունցդ ունենան:

Ֆրանսիա գնացողների մեջ մեծամասնություն են կազմում փոխնախարարներ, Գերագույն խորհրդի անդամներ, պատգամավորներ և արտաքին առևտրի նախարարության աշխատողներ, որոնք ուղիղ կապեր ունեն տնտեսագիտության, առևտրի և դրամաշրջանառության մասնագիտությունների հետ:

Այս թեկնածուների հետ տեսակցել է Ֆրանսիական կառավարության կողմից դեկտեմբերի 11-ի և 13-ի միջև հատուկ Երևան գործուղված Կլոդ Ժանը:

Քրիստիան Տեր-Ստեփանյանն ասում է, որ հայ պետական պաշտոնյաները Ֆրանսիայում երեք շաբաթում պետք է հետևեն գլխավորապես հետևյալ դասերին. սեփականաշնորհում, գների պատրաստում, մրցակցություն, դրամական դերը տնտեսությունում, միջազգային չափանիշներ և հակադրամազրկության քաղաքականություն:

Նշենք, որ Ֆրանսիան նման հնարավորություն ընձեռնել է նախկին Խ. Միության հանրապետություններից միայն Հայաստանին, Ռուսաստանին, Ուկրաինային, Ղրղզստանին և Լատվիային:

Նորաստեղծ մեր հանրապետության տարբեր մարզերի երիտասարդ կառավարողների գոնե երեք շաբաթվա մեջ արտասահմանյան որոշ փորձառություններ ձեռք բերելու հնարավորությունը ողջունելի է: Հիշեցնենք, որ Ֆրանսիան, դեռ 1990-ին վարչապետի առաջին տեղակալի մակարդակով հայտնել էր *«Ֆրանսիական կառավարության Հայաստանի հետ տարբեր մարզերում ուղիղ կապ հաստատելու իր ցանկությունը»* այն ժամանակվա Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի փոխնախագահ Ռաֆայել Ղազարյանին, որը Փարիզ էր հրավիրված զանազան տեսակցությունների նպատակով. Ֆրանսիական *Դիտորդ կոմունիկասիոն* կազմակերպության կողմից: Սա ավելի շոշափելի դարձավ, երբ 1991-ի մայիսին Հայաստանի հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պաշտոնական այցելություն կատարեց Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ֆրանսուա Միտերանին, որից հետո Հրանտ Բագրատյանի և տիկ. Էլիզաբեթ Գիգուի միջև համաձայնություն կնքվեց երկու երկրների համագործակցության վերաբերյալ:

ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ՍՐՍՔՍ

## Մութալիբովը տարակուսանքի մեջ է

Ինչպես հաղորդում է Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը, Այազ Մութալիբովը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին Ադրբեջանի դիվանագիտական ճանաչման համար: Այդ մասին Բուշը տեղեկացրել էր հունվարի 3-ին: Պատասխան ուղերձում նախագահ Մութալիբովը հայտարարել է, որ Ադրբեջանը պատրաստ է միանալ միջուկային զենքի չտարածման պայմանագրին, ինչպես նաև կառուցել իր

հարաբերությունները բոլոր երկրների հետ միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա:

Միևնույն ժամանակ նամակում արտահայտվում է Ադրբեջանի հասարակայնության մտահոգությունը, որ ԱՄՆ-ը տարբեր մոտեցում է դրսևորել Հայաստանի և Ադրբեջանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործում:

Ինչպես հայտնի է, Վաշինգտոնը Երևանի հետ դիվանագիտական հարաբերություններ է հաստատում լրիվ ծավալով, մինչդեռ Բաքվի հետ դիվանագիտական կապերն առայժմ կրդահոյանվեն Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանի միջոցով:

Այլ խոսքերով, ճանաչելով Ադրբեջանի անկախությունը, ԱՄՆ-ը դեռ խուսափում է հաստատել լիաժավալ դիվանագիտական հարաբերություններ: Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակցի խոսքերով, այդ քայլը կախված կլինի այն բանից, թե որքանով Բաքուն կդահոյանի դրա համար առաջադրված պայմանները, հատկապես, նվիրվածությունը անվտանգության և դեմոկրատական բարեփոխումների խաղաղասիրությանը:

Մութալիբովի նամակում ասվում է, որ այդպիսի մոտեցումը *«առաջացնում է Ադրբեջանի հասարակայնության տարակուսանքը»:* Նրա խոսքերով, ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության առկայությունը Ադրբեջանում չափազանց կարևոր է հանրապետությունում և ընդհանուր առմամբ Անդրկովկասում ստեղծված իրավիճակի մասին ճշգրիտ տեղեկություն ստանալու համար:

## Արեւմուտքը մտահոգված է նախկին Միության հանրապետություններում ստեղծված իրավիճակով

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, հատկապես Անդրկովկասում ստեղծված իրավիճակը առաջացնում է Արեւմուտքի լուրջ մտահոգությունը: Սակայն, այնուամենայնիվ, հույս կա, որ հնարավոր կլինի խուսափել «հարավսլավական տարբերակից»: Այդ մասին հունվարի 9-ին Մոսկվայում կայացած մամլո ասուլիսում հայտարարեց Գերմանիայի Բունդեստագի ՔՀՄ/ՔՍՍ ֆրակցիայի խոսնակ Բերնդ Վելցը: Նրա խոսքերով, Արեւմուտքը շահագրգռված է նախկին ԽՍՀՄ միջուկային միացյալ վերահսկողության պահպանմամբ:

Անհրաժեշտ է բացառել նախկին Միության սահմաններից միջուկային տեխնոլոգիայի դուրս հանելու եւ արտասահման, հատկապես Ասիայի երկրներ, այդ բնագավառում աշխատող խորհրդային գիտնականների մեկնելու ամեն մի հնարավորությունը: Նա հույս հայտնեց նաեւ, որ Սեւ ծովի նավահանգիստի ճակատագիրը կլուծվի Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ «ջանադիր եւ խելացի» բանակցությունների միջոցով: ■

## Պայթյուն Կրասնովոդսկ-Բաքու լաստանավում

Ինչպես հաղորդեցին «ԻԴ»-ին Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունում, հունվարի 8-ին Բաքվի նավահանգստի կառանատեղին մոտենալու ժամանակ «Խորհրդային Կալմիկիա» Կրասնովոդսկ-Բաքու լաստանավի վրա տեղի է ունեցել ուժեղ պայթյուն: Ավելի քան 250 ուղեւորներից միանգամից զոհվել են 7-ը: Հունվարի 10-ի տվյալներով, զոհերի թիվը հասել է 23-ի: Մոտ 56 ուղեւոր վիրավորվել է, 10-ը անհայտ կորել:

Հետաքննության ընթացքում լաստանավի տախտակամածի վրա հայտնաբերվել է պայթուցիկ սարքավորումների 2 դետոնատոր: Ադրբեջանի ՆԳՆ-ում գտնում են, որ տեղի է ունեցել ահաբեկչական գործողություն: Եւ չեն բացառում, որ պայթյունը կազմակերպել են Կրասնովոդսկում աղորող հայերը:

Դրա հետ մեկտեղ, մեկ այլ վարկածի համաձայն, հավանաբար լաստանավի պայթյունը լեզգիների մինչ այժմ անհայտ «Ազադվալ» կազմակերպության ձեռքի գործն է: ■

## ԽՄԿԿ-ն վերա[illegible]

ԽՄԿԿ նախկին կենտրոնական կոմիտեի մի խումբ անդամներ նախաձեռնություն են ստորագրել, հաղորդեց նախաձեռնող խմբի կազմակերպիչներից մեկը: Համամիութենական [illegible]ի «կոմունիստների միասնության համար» հայտարարության մեջ նշվում է, որ «կոմունիստական կենտրոնական կոմիտեն երկարատեւ լռությունից հետո [illegible]նի եւ նույնիսկ պարտավոր է արտա[illegible]տել իր տեսակետը տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ»:

Դրա հետ մեկտեղ, հայտարարության մեջ նշվում է, «կենտկոմի ամեն որոշում ներկա պայմաններում կլինի միայն նրա անդամների անձնական կարծիք», քանի որ «Կենտկոմը, որը հասցրել էր երկիրը եւ կուսակցությունն աղետի եւ ծգնաժամային պահին անգործության էր մատնվել, կորցրել է կուսակցությունը ղեկավարելու իրավունքը»:

Շատ շրջաններում, քաղաքներում, մարզերում եւ նույնիսկ հանրապետություններում արդեն վերաստեղծվել են կոմունիստների կազմակերպությունները: Մոտակա շաբաթների ընթացքում տեղի կունենան շրջանային համաժողովներ, որոնք պատգամավորներ կընտրեն «կոմունիստների կուսակցության վերածննդի համագումարին» մասնակցելու համար: ■

## Հանրապետություններում կբացվեն 12 նոր թուրքական դեսպանատներ

Թուրքական «Պատշգամբ»-ի դեկտեմբերի 18-ի համարում հրապարակվել է Թուրքիայի նախարարների խորհրդի վերջերս ընդունած որոշումը նախկին Խ. Միության, ներկայումս անկախացած հանրապետություններում նոր դեսպանատներ բացելու վերաբերյալ: Որոշման համաձայն, բացի Ռուսաստանից, 12 նոր թուրքական դեսպանատներ են բացվելու 11 հանրապետություններում: Դեսպանատներ կբացվեն հետեւյալ հանրապետություններում եւ քաղաքներում.

Ղազախստանում՝ Ալմա-Աթա, Թուրքմենստանում՝ Աշխաբադ, Ադրբեջանում՝ Բաքու, Ղրղզստանում՝ Բիշքեկ, Տաջիկստանում՝ Դուշանբե, Հայաստանում՝ Երեւան, Ուկրաինայում՝ Կիեւ, Մոլդովայում՝ Քիշնեւ, Բելառուսում՝ Մինսկ, Ուզբեկստանում՝ Տաշքենդ, Վրաստանում՝ Բաթում եւ Թբիլիսի: ■

# Դաշնակցական [illegible]տանիք

Ներքին խոր եւ խուլ տագնապների մեջ է գտնվում Հայ հեղափոխական դաշնակցությունը Սփյուռքում: Ֆրանսիայում, Կիպրոսում, Ս. Նահանգներում ու սաստկասիր արգեստ նայում նկատվում են ներքին խոր ճեղքվածքներ: Նույնիսկ [illegible]եան են գալիս նոր կազմավորումներ, որոնք չեն ենթարկվում այլեւս ՀՅԴ կենտրոնական կամ բյուրոյին: Նույնը վերաբերում է նաեւ Դաշնակցությանը ենթակա եկեղեցական [illegible]մակարգային ու մանավանդ բարեգործական մարմիններին ու կազմակերպություններին: Բազմացել են կուսակցության ներսում, այսպես կոչված, այլախոհական հրապարակումները, թռուցիկները, շրջաբերականները: Այսուհանդերձ, քար լռություն էր պահում դաշնակցական մամուլը, գոնե նրա մեջ հայտնի օրգանները, որոնք դուրգն ակնար[illegible]ան անգամ չէին հրապարակում հատկապես վերջին ամիսներին զորացած այդ խմորումների մասին: Բացառություն է կազմում, գուցե առաջին անգամ, ՀՅԴ-ի Փարիզի պաշտոնաթերթը՝ «Կամք»-ը, որի 26 դեկտ. 1991-ի համարի խմբագրականը հրատարակում ենք ստորեւ: Դժվար չէ այնտեղ, ուռուցիկ բառերի կույտի տակ գտնել ներքին տագնապը եւ... սպառնալիքները:

Հ.Յ. Դաշնակցութիւնը, ազգային ծառայութեան իր երկարաւուն երթի ընթացքին կուսակցութիւն է արտակարգ փորձ եւ հարստութիւն: Ըլլալով *հատու քաղաքական* կազմակերպութիւն, ան գիտակից է, որ ժողովուրդն է իր գործի յենարանը եւ ազգի աղագայի կնիքը: Հետեւաբար, ազգի գոյացման բոլոր մարզերը, անխտիր, կը մտնեն իր հետաքրքրութեան սահմաններէն ներս եւ ինք կ'ուզէ հոն տանիլ իր աշխարհը եւ ազգի աղագան տեսնելու իր կերպը: Ան կը բերէ իր կերպը, առանց արգելք ըլլալու այլոց կերպին եւ ոճին, հաստատելով որ ժողովուրդը ինք պիտի ընտրէ եւ վճռէ, այսօրը, վաղը...

Հայոց եկեղեցին ազգային հաստատութիւն է, իր յարակից կազմակերպութեան, մանաւանդ երբ կրօնականէն տարբեր ներկայացուցչութեան կը ձգտի: Այս պատճառով ալ Դաշնակցական ընտանիքը անտարբեր չի կրնար ըլլալ: Երիտասարդութիւնը եւ մշակոյթը ազգի աղագան եւ ոգին կը յատկանշեն եւ մենք ենք կրնար ձեռնոյ մնալ: Այս պատճառով Դաշնակցութիւնը ունեցած է երիտասարդական կազմակերպութիւններ, եւ ունի, քաղաքականէն մինչեւ մարզական ձգտող, իր մշակութային կազմակերպութիւնները, դպրոցներէն մինչեւ բաւրոն, երաժշտութիւն, հրատարակչական, եւայլն: Ասոնց միջոցաւ գաղութական ընտանիքը իր տեսակէտները կը տարածէ եւ իր իսկ կողմէ ստեղծուած կառոյցներ «վարձու չի տար» զանազաններու, որոնք իր ազգային տեսիլքը ֆանդելու գործին [illegible]թուին: Այլ խոսքով, կարելի չէ Դաշնակցութեան ազգային գաղափարներուն դէմ պայքարիլ եւ անդամակցիլ անոր կողմէ ընդունուած կառոյցներուն: Այս բացատրութիւնները չեն [illegible] անհանդուրժողութեան ոգիէ, որ մաւած ամբարտաւանութիւն կամ փասարկում է, այլ հակառութիւններէ եւ անհեթեթութիւններէ զերծ մնալու ողջամիտ ցանկութենէ:

Հայը ընդհանրապէս, դաշնակցական ընտանիքը մասնաւորաբար, ազգային մեծ եւ դժուար դասի մը նուիրեալն է, եւ բնոյթաբարեկամական ուսկայիկ ճարտիկութիւնները օգտակար չեն հասարակաց գործին: Այս դժուար պայքարի ընթացքին, պատնէշի վրայ գտնուողները իրենք գիրենք աղահով պէտք է զգան, որ հոգեվիճակներով առաջնորդուողներ գիրենք պիտի չհարուածեն թիկունքէն: Ոչ դաշնակցական ընտանիքին եւ ոչ ալ ազգին օգտակար է մշտապէս անորոշութիւններու մէջ նաւարկել ինչ-ինչ չխոստովանուած յոյսերով:

Ընդդիմախօս կազմակերպութիւններու հետ կարելի է խօսակցիլ, նոյնիսկ գործակցիլ: Սակայն «ընտանիք»-ին մէջ կարելի չէ ընդունիլ գաղափարաբանական-քաղաքական հիմնական տարբերութիւններ: Կարելի է ենթադրել ժողովցման եղանակներ եւ գործելաձեւ, բայց «ընտանիք»-ները կը կազմուին յստակ արեւելումներով:

Պայքարող կազմակերպութիւնները չեն կրնար ընթանալ գիկգակներով, խարխափումներով:

Այս հասկացողութեամբ ալ «Դաշնակցական ընտանիքը» ունի դրոշ եւ դիմագիծ, իր մարզական եւ մշակութային միութիւններով ու կեդրոններով, իր մամուլով եւ այլ կառոյցներով:

Կը մերժենք անհանդուրժողութիւնը, բայց միաժամանակ կը մերժենք ջիրոքներ ստեղծող ղատեհատաբական ճարտիկութիւնները: ■

Լուրերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 — Խմբագիր՝ Յ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Editor H. AVEDIKIAN — Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի — ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@